

ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

Մարզիկ

ՄՅԵԼԵ ՐԵՄԻՏԵ ՏԻՄԵՐԵ
ՏՎԵՐԻՄԵՆ ԴԵՄԻՏԵՆ ԲԵՐՈՒՏ

marzig

SPORTS MAGAZINE

35-ԲԳ ՏՄԻԻ, 2016, ԹԻԻ 404 VOL. XXXV N° 404 السنة الخامسة والثلاثون - العدد رقم ٤٠٤

ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ





ԹԵՐԹԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 35-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ՝

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրաչ Սիսեռեան	5000 \$	Յարուբ Պէտիկեան	200 \$
Աուտի դրամատուն	800 \$	Մարաշի Հայրենակց. Միութիւն	200 \$
Հայկական հաստատութիւն մը	666 \$	Ժագ Քերթէշեան	200 \$
Պուրճ Համուտի քաղաքապետութիւն	666 \$	Հայկազ Եարտըմեան	200 \$
Պէթի Սէֆերեան	630 \$	Անդրանիկ Մարըլեան	200 \$
Վրէժ Սապունճեան	500 \$	ՍԱԼԹԵՔ	200 \$
Արթիւր Նազարեան	500 \$	Տոքթ. Իշխան Եղիայեան	200 \$
Վաչէ Տէմիրճեան	500 \$	Րաֆֆի Մունջօղլեան	200 \$
Ատոմ եւ Սելլա Թնճուկեան	500 \$	Սեւակ Փանոսեան	200 \$
Կարօ եւ Մարտիրոս Պոյաճեան	500 \$	Տէր եւ տիկ. Րաֆֆի Մետրոպեան	200 \$
Սարգիսեան եղբարք	500 \$	Կիրակոս Նէնէճեան	200 \$
Փօլ Այանեան	500 \$	Արա Քէնտիրճեան	200 \$
Յակոբ Լոշխաճեան	333 \$	Ռազմիկ Փանոսեան	200 \$
Տէր եւ տիկ. Ստեփան Տէր Պետրոսեան	333 \$	Ենրճ Գարամանուկեան	200 \$
Տէր եւ տիկ. Ռոպէր Մետրոպեան	333 \$	Աբօ Մոսիկեան	150 \$
Այնճարի քաղաքապետութիւն	333 \$	Արա Յակոբեան	150 \$
Գրիգորիս Պողարեան	300 \$	Յարութիւն Սամուէլեան	133 \$
Տոքթ. Սահակ Քէշիշեան	300 \$	Շիմշիրեան ընտանիք	100 \$
Յովսէփ Մարգարեան	300 \$	Փիէր Գուլաճեան	100 \$
ՄԵՆՁԱ	300 \$	Յակոբ Աբրահամեան	100 \$
ԱՖՅԻԼ	300 \$	Քալլաս ոսկերչ. հաստ.	100 \$
Դրօ Մանտալեան	300 \$	Տէր եւ տիկ. Րաֆֆի Սէմէրճեան	100 \$
Ալէքս Մուրատեան	300 \$	Տէր եւ տիկ. Չաւէն Պոյաճեան	100 \$
Դրօ Հաճիմանուկեան	300 \$	Սէմ Րագուպեան	100 \$
Տէր եւ տիկ. Յովիկ Կեօզիւպէօյիւքեան	250 \$	Նուրիճան Տէմիրճեան	100 \$
Յարութիւն Պուլտուքեան	250 \$	Սարգիս Ստեփանեան	100 \$
Տէր եւ տիկ. Մարտիկ Արսլանեան	200 \$	Զարման Տաղլեան	100 \$
Կարօ Սեդրակեան	200 \$	Տէր եւ տիկ. Պերճ Միսքճեան	100 \$

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



«ՄԱՐԶԻԿ»Ի
ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

- ◆ Ցաւակցագիրներ եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահուան առիթով
- ◆ Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական 9-րդ խորհրդածողովը
- ◆ Մեր Տեսակցութիւնները/Եղբ. Բագրատ Եսայեանի հետ
- ◆ «Մարզիկ»ի 35-ամեակի տօնակատարութիւնները

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Յաջողութեան գաղտնիքը	2-3
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	4-5
ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ	6-9
ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ	10-12
ՍԿԱՈՒՏԱԿԱՆ	13-21
ՈԳԵԿՈՉՈՒՄ	22-23
ԴԵՄՔԵՐՈՒ ՀԵՏ	24
ՄԱՍՆԱԾԻՒՂԷ ՄԱՍՆԱԾԻՒՂ	26-63



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

Խմբագիր: Վիգեն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողարեան, Մարո Քէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Ծախիկեան

Վարչական կազմ: Պարրիկ Կիւլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիլվա Սադրեան, Յարութ Ալանճեան, Նազօ Հապիպեան, Ռիթա Օդուլեան, Արլին Շամմասեան:

Էջադրում եւ ընդհանուր չեւաորում: Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

Քաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաժանորդներու: Տարեկան քաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 32 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հատուկ անդամ սակն է 5000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրասխանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով:

ՅԱՐԳԻԿՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի 98-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Մարդիկ, հայեր ու մանա-
ւանդ օտարներ, յաճախ
զարմացած հարց կու
տան, թե ո՞րն է Հ.Մ.Ը.Մ.ի
յաջողութեան գաղտնիքը:
Աշխարհը կ'ընթանայ դեպի անհատա-
պաշտութիւն, նիւթապաշտութիւն, ընկե-
րային անապահովութիւն եւ մեքենապաշ-
տութիւն, մինչդեռ Հ.Մ.Ը.Մ.ը կը թիավարէ
այս բոլորին դէմ, կը դիմանայ ու կը մեծ-
նայ քանակով եւ որակով:



«Մարգիկ»ի այս թիւին ընթերցողը կրնայ ասի ի բե-
րան մնալ ի տես այն գործունէութեան, զոր այս միու-
թիւնը ծաւալած է աշխարհի չորս ծագերուն: Կ'արժէ
ուշի-ուշով դիտել խմբանկարները ընթացիկ տարուան
բանակումներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ական եռանդուն
գործին վկաները կը հանդիսանան հեռաւոր Աւստրալ-
իայէն մինչեւ ամերիկեան ցամաքամաս, Մոսկուայէն
մինչեւ Եւրոպա եւ Միջին Արեւելք: Հոն ուր հայութիւն
կայ, հոն Հ.Մ.Ը.Մ.ի շնչող ու ներշնչող ներկայութիւնը
կայ: Կազմակերպական իր հսկայ ցանցով եւ համա-
կարգեալ ծրագրումով, Հ.Մ.Ը.Մ. ամենուրեք հայեցի
միջավայր ու մթնոլորտ կը ստեղծէ: Ազգային նկարա-
զիր ու դիմագիծ կը կերտէ:

Ու պատահական չէ, որ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը,
ուր ալ գտնուին, անոնք իրարու կը նմանին իրենց աշ-
խատանքներով, մտահոգութիւններով եւ ապագայի
հեռանկարներով: Բոլորը յուզող նիւթերը միեւնոյնն
են: Բոլորին տազնապը Հայն է ու Հայաստանը: Տեղա-
կան-տեղայնական իրենց առանձնայատկութիւնները
պահելով հանդերձ, բոլորը կը դաւանին ազգային,
միութենական այն արժէքները, որոնք 98-ամեայ այս
միութեան փառքի պատուանդանը կը հանդիսանան:

Ընդունինք, որ աշխարհը տարտնող ազդակ է, կեդ-
րոնախոյս տրամադրութիւններու միջավայր է, Հ.Մ.
Ը.Մ.ը հակառակն է՝ համախմբող ուժ է, հայ մարդը իր
ազգային արմատներուն կապող միութիւն է: Հ.Մ.Ը.Մ.ի
պարտականութիւնն է տեսարար *հաւաքել, համախմբ-
րել* ու *դաստիարակել* նորահաս սերունդները, նպա-

տակի մը շուրջ միաձուլել զանոնք եւ, իր-
բեւ պատրաստի ուժ, ներկայացնել մեր
ժողովուրդի ծառայութեան ասպարէզ:

Շատերուն կրնայ անհասկնալի թուիլ
այս գործին տարողութիւնն ու ծաւալը:
Երկիրներ ու ցամաքամասներ իրարու
կապելու համար անհրաժեշտ են մարդու-
ժի, նիւթական, վարչական-կազմակերպ-
չական հսկայական միջոցներ, որոնք
միշտ ձեռնտու չեն: Հ.Մ.Ը.Մ. կամաւոր աշ-
խատանքի ախոյեանն է սակայն: Միու-

թեանականներու նուիրաբերումի եւ զոհողութեան գու-
մարով ան կը յաջողի այդքան գործ կատարել պատ-
ուաբեր կերպով:

Դժուար է գործը, անկասկած: Բայց ե՞րբ դիւրին
պայմաններու մէջ գործած է Հ.Մ.Ը.Մ.ը: Ներքին ու ար-
տաքին պայմանները առհասարակ նպաստաւոր
եղած չեն միութենական աշխատանքի համար, սա-
կայն այնքան ատեն որ Հ.Մ.Ը.Մ.ականի հաւատքն ու
կամքը անպակաս եղած են, երբը շարունակուած է: Կը
բաւէ աչքի առջեւ ունենալ այսօրուան պայմաններուն
մէջ կատարուող գործն ու անոր արդիւնքը:

Այն պահուն, երբ արդի արհեստագիտութիւնը նոր
սերունդը կը հեռացնէ ծնողական, ընկերային ու ազ-
գային իր շրջանակէն:

Այն պահուն, երբ համաշխարհայնացած աշխարհը
կը խորտակէ ազգային ամէն արժէք, կառոյց եւ ըմբռնում:

Ու այն պահուն, երբ մարդկային իրաւունքներու եւ
ազատութիւններու անունով անձեւ, անգոյն ու անդի-
մագիծ ընկերութիւններ կը ստեղծուին հոս ու հոն:

Հ.Մ.Ը.Մ. կը մնայ պատուար՝ մեր իրականութենէն
ներս տեսակաւոր վտանգներու թափանցումին դէմ:

Հ.Մ.Ը.Մ. կը մնայ հայ կեանքի երիտասարդական
մեծագոյն կազմակերպութիւնը, որ կարգապահու-
թեան եւ խստապահանջութեան լաւագոյն օրինակնե-
րը կը փոխանցէ իր անդամներուն, մատղաշ տարիքի
անոնց խանդավառութեան միացնելով կազմակերպը-
ւելու եւ կանոններու ենթարկուելու միութենական յատ-
կութիւնը:



Հ.Մ.Ը.Մ. կը մնայ «ապահովագրական» այն միութիւնը, որ *հաւաքական դաստիարակութեան* իր ըմբռնումով կը կերտէ բարոյական սկզբունքներու տէր մարդիկ՝ հաւատարիմ մարդկային արժէքներու եւ գիտակից քաղաքացիական պարտաւորութիւններու:

Հ.Մ.Ը.Մ. կը մնայ այն ապահով միջավայրը, ուր «Տարագիր հայն իր կեանքը կը նորոգէ», ազգային խանդավառութեան եւ հպարտութեան ապրումներով: Հ.Մ.Ը.Մ.ի մէջ հայ մարդը կ'ապրի ազգային ամբողջութեան մը մէկ մասնիկը ըլլալու զգացումը: Համահայկական բանակումներու, մարզախաղերու, սեմինարներու եւ խորհրդաժողովներու ճամբով, կը կատարուին տեղեկութիւններու եւ փորձառութիւններու մնայուն փոխանակումներ, որոնք Հ.Մ.Ը.Մ.ականը կը մղեն հայութեան մէկութեան հաւատալու եւ այդ մէկութեան համար գործելու:

Մասնաճիւղէ մասնաճիւղ, շրջանէ շրջան, Հ.Մ.Ը.Մ. համահայկական առաջադրանքներով եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներով նորահաս սերունդները հաղորդակից կը դարձնէ նախ իրարու եւ ապա՝ մեր ազգային ընդհանրական իտեալներուն, անկախ հայրենիքի իրականութեան, Հայ Դատին եւ հայ ժողովուրդին ծառայելու հրամայականին:

Իսկ կա՞յ աւելի վսեմ հրամայական՝ քան Հայ Դատին եւ հայ ժողովուրդին ծառայութիւնը, հայեցի դիմագիծով երիտասարդութեան մը պատրաստութիւնը, իբրեւ երաշխիք մեր ժողովուրդի գոյատեւման, իբրեւ գրաւական մեր հայրենիքի հզօրացման:

Ահա՛ Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութիւնն ու կարեւորութիւնը՝ իր հիմնադրութենէն 98 տարի ետք:

Ահա՛ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի յարատեւութեան եւ յաջողութեան գաղտնիքը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆՆԵՐ, ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ, ՄԻԱԲՈՐՆԵՐ

Հայաստան: Երեւան, Մալաթիա, Չէլթուն, Կոմիտաս, Երէրունի, Արովեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաւիր, Էջմիածին, Մարտունի/Չօրաքար, Մարտունի/Ճովինար, Կիւմրի, Վերի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկոս. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պուրմ Համուր, Այնճար, Ծիւնի, Անթիլիաս, Ժըրէյրէ, Պաուշրիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղատար, Մուսուլ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմեյլո, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Սուրերթելիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փլովարիլ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիճ, Սէնթ Գաբրիէլ, Լաւալ. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Ֆրեզնօ, Մոնթիպելլօ, Փասադինա, Կլէնլէյլ, Օրէնճ Բաունթրի, Սան Ֆեռնանտօ, Սան Տիէգօ, Ինլընդ Էմիլայր, Սանթա Գլարա, Քրետէնթա Հովիլ, Պրայէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնաթ Բրիք, Նորթ Հոլիվուդ. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքսոն, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոթ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորյոպա, Մոնթեվիդէօ. **Աւստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արար»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարար»), Մելբուռն.



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

26 -28 Հոկտեմբեր 2016-ին, Նիկոսիոյ մէջ տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Մ.ի միջ-դիւանական 9-րդ խորհրդաժողովը, կազմակերպութեամբ Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, հիւրընկալութեամբ Կիպրոսի Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան եւ մասնակցութեամբ միութեան համահայկական կառոյցի 7 Շրջանային եւ 12 Մեկուսի Վարչութիւններու 40 ներկայացուցիչներու:

Խորհրդաժողովին առաջին օրը յատկացուեցաւ միութեան աշխատանքներուն ներկայացման եւ արժեւորման: Մասնակիցները լսեցին Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ ապա՝ Շրջանային թէ Մեկուսի Վարչութիւններու միամեայ գործունէութեան տեղեկագիրները եւ իրազեկ դարձան յառաջիկայի անոնց ծրագիրներուն:

Այնուհետեւ, խորհրդաժողովը քննեց Հ.Ս.Ը.Մ.ի համահայկական ընտանիքը յուզող մարզական, սկաուտական եւ վարչական հրատապ նիւթեր: Յատուկ քննարկման ներկայացուեցան Հ.Ս.Ը.Մ.ի եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն վերաբերող ծրագիրներ, «Մարզիկ» պաշտօնաթերթի, Հ.Ս.Ը.Մ.ի համացանցի կայքէջի, վարչական ու դիւանական ընթացիկ աշխատանքներ:

Կազմակերպչական օրակարգով, միջ-դիւանական խորհրդաժողովը առաջադրեց Հայաստանի մէջ Հ.Ս.Ը.Մ.ի տարածման եւ ամրապնդման նոր ծրագիրներ՝ յաւելեալ միաւորներու եւ կեդրոններու ստեղծման անհրաժեշտութեամբ: Կարելոր անդրադարձ

կատարուեցաւ միութեան Եւրոպայի նորաստեղծ մասնաճիւղերուն, որոնք օրէ օր կը բազմանան Միջին Արեւելքէն մեծաթիւ հայորդիներու տեղափոխութեան պատճառով:

Միջ-դիւանական խորհրդաժողովը իր զօրակցութիւնը յայտնեց Հ.Ս.Ը.Մ.ի Սուրիոյ ընտանիքին՝ երկրին դժուարին պայմաններուն մէջ իր կատարած երախտաշատ աշխատանքին համար:

Համա-Հ.Ս.Ը.Մ.ական նախաձեռնութիւնները իրենց կարելոր բաժինը ունեցան միջ-դիւանական խորհրդաժողովին ընթացքին: Առ այդ, քննարկումի նիւթ դարձան համա-Հ.Ս.Ը.Մ.ական յառաջիկայ մարզախաղերը (2017) եւ բանակումը (2018) լաւագոյն ձեւով կազմակերպելու միջոցները: Որոշուեցաւ, որ համա-Հ.Ս.Ը.Մ.ական մարզախաղերով ազդանշանը տրուի միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն, իսկ բանակումով եւ Երեւանի մէջ կազմակերպուած մեծաշուք հանդիսութեամբ փակումը կատարուի միութեան 100-ամեակի յոբելենական տարւան:

Միջ-դիւանական խորհրդաժողովը քննեց նաեւ միութեան քարոզչական համակարգին վերաբերող հարցեր եւ գոհունակութեամբ տեղեկացաւ, որ արդէն իսկ ընթացք առած են միութեան արդիական կայքէջի պատրաստութեան, «Մարզիկ» պաշտօնաթերթի թուայնացման եւ «Մարզիկ» երկլեզու լրատուին աշխատանքները:

Իր օրակարգի վերջին բաժինով, միջ-դիւանական խորհրդաժողովը շեշտեց արդի արհեստագիտու-

թեան միջոցներէն առաւելագոյնս օգտուելու հրամայականը: Այս առիթով ներկայացուցան «Կուկըլ»-ի հետ Հ.Ս.Ը.Մ.ի կնքած համաձայնութեան մանրամասնութիւնները եւ միութեան ռազմավարական ծրագիրի արդի արհեստագիտութեան բաժինին վերաբերող ծրագիրները:

Հ.Ս.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԼԻԱԳՈՒՄԱՐԻ ՆԻՍՏԵՐԸ

Հ.Ս.Ը.Մ.ի միջ-դիւանական 9-րդ խորհրդաժողովը կանխեց Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկօրեայ լիազումարը, որ քննեց միութեան վերջին Պատգամաւորական ժողովէն՝ Սեպտեմբեր 2015-էն մինչեւ օրս միութեան կատարած աշխատանքները եւ յառաջիկայ երեք տարիներու ծրագիրները:

Լիազումարը լայնօրէն անդրադարձաւ համա-Հ.Ս.Ը.Մ.ական յառաջիկայ մարզախաղերուն եւ բանակումին կազմակերպման աշխատանքներուն: Արժարժուեցան նաեւ միութեան կազմակերպական կեանքը յուզող ընդհանրական մտահոգութիւններ. Երոպայի մէջ նոր մասնաձիւղերու ստեղծում, Հայաստանի մէջ կազմակերպական ցանցի ընդլայնում, սկաուտական միջազգային համագումարներու եւ ծանապորհներու մասնակցութիւն, միութեան քարոզ-



չական համակարգի վերակազմակերպում, տնտեսական հզօրացման նախաձեռնութիւններ եւ այլն:

Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լիազումարը իր երկօրեայ նիստերուն ընթացքին մշակեց նաեւ միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն, հրատարակութիւններուն եւ համա-Հ.Ս.Ը.Մ.ական տարբեր նախաձեռնութիւններուն համապարփակ ծրագիրը: Որդեգրուեցաւ 100-ամեակի նշանակը, բնաբանը, երգը եւ ձեռնարկներու ընդհանուր ժամանակացոյցը:

Հ.Ս.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. ՀԻՒՐԸՆԿԱԷՑ ՍԿԱՈՒՍԱԿԱՆ ԵՒՐՈԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ 6-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 3-ՐԴ ՖՈՐՈՒՄԸ



3-8 Հոկտեմբերին, Երեւան ժամադրավայրը դարձաւ միջազգային սկաուտութեան կարելոր մէկ իրադարձութեան, երբ Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. հիւրընկալեց Համաշխարհային Սկաուտական Շարժումի Եւրոասիական տարածաշրջանի վեցերորդ համաժողովը եւ երիտասարդական եր-

րորդ ֆորումը: Այս առիթով Հայաստան ժամանեցին զանազան երկիրներէ 70 սկաուտներ եւ 50 պատուոյ հիւրեր, որոնք հայրենի սկաուտութեան ծանրով ծանօթացան հայութեան եւ Հայաստանին:

Այս մասին յաջորդ թիւով կարդալ «Մարզիկ»-ի յատուկ հարցազրոյցը՝ Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, Համաշխարհային Սկաուտական Շարժումի Կոմիտէի անդամ Եղբ. Բագրատ Եսայեանի հետ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԲԻԻԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Միտթեճնական շուրջ երեք քառորդ դարու վաստակով մը բեռնաւոր-լած, 6 Դեկտեմբեր 2016-ին, կեանքէն հեռացաւ բազմավաստակ Հ.Մ.-Ը.Մ.ական եղբ. Բիւզանդ Թորիկեան:

Եղբ. Թորիկեան կը նկատուէր Հ.Մ.-Ը.Մ.ի սփիւռքեան գործունէութեան երկրորդ սերունդի ամէնէն կարկառուն ղեմքերէն մէկը, որուն վիճակուած էր, հաւատաւոր այլ Հ.Մ.-Ը.Մ.ականներու հետ, Հ.Մ.-Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածելու պատասխանատու աշխատանքը: Ան ծնած էր Հալէպ, 1931-ին եւ փոքր տարիքէն փոխադրուած էր Լիբանան:

Եղբ. Թորիկեան Հ.Մ.-Ը.Մ.ին մաս կը կազմէ 1943-ին, Պէյրուսի Ս. Նշան վարժարանի աշակերտութեան օրերուն, հանրածանօթ Հ.Մ.-



Ը.Մ.ական եղբ. Լեւոն Աբգարեանի շնորհիւ: Այնուհետեւ, ընտանեօք ան կը փոխադրուի Ճիւնի, ուր 1951-ին կը հանդիսանայ Հ.Մ.-Ը.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղի հիմնադիրներէն: Մինչեւ 1957 մաս կը կազմէ Հ.Մ.-Ը.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղի յաջորդական վարչութիւններուն, ապա Պէյրուս հաստատուելով՝ վարչական գործունէութիւնը կը շարունակէ Հ.Մ.-Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղին մէջ, 1958-1968 ստանձնելով մասնաճիւղին վարչութեան ատենադպրութեան պաշտօնը:

Եղբ. Բիւզանդ Թորիկեան 1958-ին կը պրսակուի Տիգի Զպուքեանի հետ եւ կը բախտաւորուի չորս զաւակով: Ան յանձնառու մասնակցութիւն կ'ունենայ լիբանանահայ ազգային կեանքին՝ բազմիցս մաս կազմելով Լիբանանի հայոց թեմի Ազգային երեսփոխանական ժողովին եւ Ազունիէի խնամակալութեան:

Եղբ. Բիւզանդ Թորիկեանի նախասիրութիւնը եղած է աթլետիզմը: Ան տիրացած է աթլետիզմի միջազգային իրաւարարի տիտղոսին: Իբրեւ Հ.Մ.-Ը.Մ.ի ներկայացուցիչ, 1965-ին եղած է լիբանանեան աթլետիզմի Ֆետերասիոնի հիմնադիր անդամներէն մէկը, նաեւ՝ գլխաւոր հիմնադիրներէն ԼԵՎԱՄ-ի մարզախաղերուն:

1969-ին, եղբ. Բիւզանդ Թորիկեան ընտրուած է անդամ Հ.Մ.-Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան, որ օրին կը նկատուէր միութեան գերագոյն մարմինը, տրուած ըլլալով, որ ան կը ղեկավարէր Հ.Մ.-Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի մասնաճիւղերը: 1969-1974 Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութեան մաս կազմելէ ետք, 1974-ին,

ՄԱՀԱՉԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը խոր կսկիծով կը գուժէ բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական, Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ՝

ԵՂԲ. ԲԻԻԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 6 Դեկտեմբեր 2016-ին:

ՄԱՀԱՉԴ

Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի խըմբագրութիւնն ու վարչութիւնը կը գուժեն թերթին բազմամեայ գործակից, աշխատակից եւ վարչական պատասխանատու՝

ԵՂԲ. ԲԻԻԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 6 Դեկտեմբեր 2016-ին:

ՄԱՀԱՉԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գուժէ Լիբանանի շրջանի բազմավաստակ եղբայրներէն եւ ԼԵՎԱՄ-ի հիմնադիր անդամներէն՝

ԵՂԲ. ԲԻԻԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 6 Դեկտեմբեր 2016-ին:

Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական առաջին Ընդհանուր Ժողովին, եղբ. Բիւզանդ Թորիկեան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ-ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ: Հետագային, ան կը վերընտրուի 1979-ին եւ 1983-ին: Այսպէս, ան Հ.Մ.Ը.Մ-ի համագաղութային բարձրագոյն մարմիններուն մաս կը կազմէ 1969-1987՝ 18 տարի անընդմիջաբար: 1999-ին, չորս տարուան համար, ան դարձեալ կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ կը վարէ միութեան ատենապետի պաշտօնը:

1990-ականներու սկիզբը, եղբ. Բիւզանդ Թորիկեան կը լծուի Հ.Մ.Ը.Մ-ի հայանուէր գործունէութեան պատմագրութեան աշխատանքին եւ չորս հատորով կը հրատարակէ միութեան պատմութիւնը՝ նախահիմնադրութեան հանգրուանէն մինչեւ 21-րդ դարու սկիզբը: «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պատմութիւն» խորագրեալ իր ստուար աշխատասիրութիւնները լոյս կը տեսնեն 1995-ին, 1999-ին, 2003-ին եւ 2007-ին:

Վերջին տարիներուն, եղբ. Բիւզանդ Թորիկեան կը ձեռնարկէ Հ.Մ.Ը.Մ-ի թանգարանի յուշամատեան-ալպոմի պատրաստութեան: Աշխատանքը գրեթէ հասած է աւարտին եւ հրատարակութեան կը ներկայանայ Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին առիթով:

Համագաղութային իր պատասխանատուութիւններուն բերումով, եղբ. Բիւզանդ Թորիկեան այցելած է սփիւռք-



եան գրեթէ բոլոր գաղութները եւ ամէնուրեք ունեցած է Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարախօսութեան եւ ազգային-բարոյական արժէքներուն մասին ելոյթներ: Ան ներկայ գտնուած է Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր Ընդհանուր Ժողովներուն, բացի վերջինէն (2015): Յաճախ հանդէս եկած է բանախօսութիւններով եւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին աշխատակցութիւններով: Երկար տարիներ մաս կազմած է «Մարզիկ»ի խմբագրական եւ վարչական կազմերուն: 2004-ին, ան արժանացած է Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

ՀԱՒԱՏՔԻ ՄԱՐԴԸ՝ ԵՂԲ. ԲԻՒՋԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ՝ ԵՂԲ. ԲԻՒՋԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Սգակիր հարազատներ,
Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ,

Դժուար է հաւատալ, որ եղբ. Բիւզանդ Թորիկեանը ոչ եւս է:

Դժուար է ընդունիլ, որ Հ.Մ.Ը.Մ.ական աթլէթ, վարչական, դաստիարակ եւ պատմագիր եղբ. Բիւզանդը մեզի հետ պիտի չըլլայ այլեւս:

73 տարուան միութենական ծառայութեանէ ետք, եղբայր Բիւզանդը շատ պիտի փնտռենք միութենական իր արժանիքներով ու փորձառութեամբ:

Երեւոյթ էր մեր երէց եղբայրը, Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան եւ ապա՝ Կեդրոնական Վարչութեան երկար տարիներու պատասխանատու անդամը: Իսկ երեւոյթները միշտ չէ որ կը կրկնուին:

Եղբայր Բիւզանդ իր գիտակից կեանքը ապրեցաւ Հ.Մ.Ը.Մ.ին հետ, Հ.Մ.Ը.Մ.ին համար: Ան հասակ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին սերունդի ներկայացուցիչներու անմիջական շունչին տակ, գործակցեցաւ երկրորդ եւ երրորդ սերունդներուն հետ եւ ահա, կեանքէն կը հեռանայ միութեան դրօշը միութեան չորրորդ սերունդին յանձնած ըլլալու խղճի հանգստութեամբ:



Չորս սերունդի հետ այս ծանօթութիւնը եւ գործակցութիւնը աննախընթաց երեւոյթ է Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ: Պատմութեան մէջ պատմութիւնն է ինքնին, որ այս պարագային գրուած է հաւատքով, համոզումով, անշահախնդիր աշխատանքով եւ յոգնութիւն չճանչցող մարդու կամքով:

Հաւատքի մարդ էր եղբայր Բիւզանդ Թորիկեան:

Հայութեան հանդէպ իր հաւատքն էր, որ պատանի տարիքին զինք առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը:

Հայ երիտասարդութեան հանդէպ հաւատքն էր, որ զինք նետեց մարզադաշտեր, ճմրան ցուրտին թէ ամրան տաքին, աթլէթի խաղեր կազմակերպելու, ԼԵՎԱՄ-ի մարզախաղեր յաջողցնելու համար:

Մեր հաւաքական ուժին հանդէպ հաւատքն էր, որ եղբ. Բիւզանդը մղեց ՀՄԸՄ-ի մասնաճիւղ հիմնելու ձիւնի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական գործ կատարելու Պէյրութի մէջ ու ապա՝ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցի կազմակերպման եւ գլխաւորման աշխատանքին լծուելու աշխարհով մէկ:

Մեր անկատար իղձերուն հանդէպ հաւատքն էր, որ եղբ. Բիւզանդը Հ.Մ.Ը.Մ.ի գերագոյն պատասխանատուութեան վրայ պահեց 22 տարի շարունակ, իբրեւ ղեկավարող, համադրող եւ առաջնորդող դէմք: Մէկը, որ վայելեց բոլորին անսակարկ յարգանքը, սէրն ու ակնածանքը:

Եւ դեռ, հայ գիրի եւ գրականութեան հանդէպ հաւատքն էր, որ եղբ. Բիւզանդին կեանքը տեւական ծառայութիւն մը դարձուց Հ.Մ.Ը.Մ.ական մամուլին ընդհանրապէս եւ «Մարգիկ» պաշտօնաթերթին յատկապէս: Գաղափարակա՛ն ծառայութիւն, կրթի՞թող ու դաստիարակող ծառայութիւն:

Այո՛, անսպառ հաւատքի մարդն



էր եղբայր Բիւզանդ Թորիկեան: Հա-
 ւատք մը, որ իր ներշնչումը կ'առնէր
 Հ.Մ.Ը.Մ-ի շարքերէն, Հ.Մ.Ը.Մ-ի ազգա-
 յին-բարոյական արժէքներէն, անցեալէն
 ու ներկայէն, մէկ խօսքով՝ Հ.Մ.Ը.Մ-ի
 պատմութենէն:

Ճիշդ այդ պատճառով ալ, հաւատքի
 մարդ ըլլալու բերումով, ան յատուկ սէր
 եւ կապուածութիւն ունեցաւ պատմու-
 թեան հանդէպ, ինչ որ զինք մղեց գրելու
 Հ.Մ.Ը.Մ-ի պատմութիւնը եւ կորուստէ
 փրկելու ազգային հարստութիւն մը,
 որուն արժէքը անգնահատելի է: Արդա-
 րեւ,

Եղբ. Բիւզանդ գրեց ու ապրեցուց
 Հ.Մ.Ը.Մ-ի մեծերը, «Նահատակ ցեղի ան-
 մահները», բայց ինք, իր մեծութեամբ,
 մնաց պարզ ու խոնարհ: Երբեք խտրութիւն
 չդրաւ մեծ ու
 փոքր գործերուն միջեւ:

Եղբ. Բիւզանդ գրեց ու պատմեց Հ.Մ.Ը.Մ-ի
 մեծագործու-
 թիւնները, յաջողութիւնները, բայց երբեք
 չխօսեցաւ իր կա-
 տարածին ու վաստակին մասին: Միշտ
 մնաց լուսարձակներէ
 եւ ծափահարութիւններէ հեռու:

Եղբ. Բիւզանդ գրեց ու միութենական
 արժէքներ լուսար-
 ձակի տակ առաւ, ինք մնայուն
 պաշտպանը ըլլալով այդ ար-



ժէքներու կիրարկման՝ համեստութեան,
 անշահախնդրու-
 թեան, եղբայրասիրութեան եւ հայրենասիրութեան:

Եղբ. Բիւզանդ գրեց եւ անմահացուց
 Հ.Մ.Ը.Մ-ը, միշտ հա-
 ւատարիմ ծառան մնալով անմահներու
 այն սերունդին, որ
 այս միութիւնը կանգուն եւ հզօր
 պահեց 98 տարի:

Իսկապէս երեւոյթ էր եղբայր
 Բիւզանդ: Հ.Մ.Ը.Մ-ի շրջուն
 համայնագիտարանն էր ան,
 պատմութեան շտեմարանը եւ
 արխիւներու հարուստ գանձարանը:

Շար.ը էջ 64

PINK
 Kimberley
 AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆ

Լիբանանի հայոց թեմ իր կատարած հովուապետական այցելութեան ծիրէն ներս, Հինգշաբթի, 24 Նոյեմբերի յետմիջօրէին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոն, ուր ղրմաւորուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան, Լիբանանի Շրջանային Վարչութեան, Պուրճ Համուտի մասնաճիւղի եւ «Մարգիկ» պաշտօնաթերթի վարչութիւններու ներկայացուցիչներուն կողմէ: Հիւրաբար ներկայ էր նաեւ այդ օրերուն Լիբանան այցելող, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, ազգային բարերար եղբ. Ատոմ Թնճուկեան:

Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանին մէջ կատարուած մտերմիկ հանդիպումի մը ընթացքին, Արամ Ա. Վեհափառը ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ըսաւ, որ ուրախութիւն եւ հպարտութիւն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գահակալ Արամ Ա. Վեհափառը ողջունել Հ.Մ.Ը.Մ.ի այս յարկին տակ: Յարկ մը, որուն պաշտօնական բացման ներկայ գտնուած է ան շուրջ 30 տարի առաջ:



«Վեհափառ Հայրը թեմական իր այցելութիւններուն ընթացքին, հաւանաբար, առիթը ունեցած է գտնուելու Հ.Մ.Ը.Մ.ի զանազան մասնաճիւղերու ակումբները, սակայն կեդրոնական Վարչութեան նստավայր այս այցելութիւնը իր տեսակին մէջ առաջինն է եւ միութեան 26 հազար անդամներուն համար ազգային ոգեւորութեան եւ հպարտութեան առիթ է»,

չեչտեց եղբ. Մկրտիչեան: Ապա, ան նշեց, որ «Արամ Վեհափառ յատուկ տեղ ունի Հ.Մ.Ը.Մ.ականներու սրտերուն մէջ: Անոր Հայրապետական պատգամները, խրախուսական օրհնութեան գիրերը եւ ազգային խանդավառ ելոյթները Մայիսեան փառատօններու ընթացքին, միշտ ալ թափ ու կորով տուած են միութեան կանգնածին: Վեհափառին ներկայութիւնը փնտուռուած ու սիրելի եղած է, որովհետեւ գաղտնիք մը յայտնած չենք ըլլար եթէ ըսենք, որ դժուար թէ գտնուի մէկը, որ Արամ Վեհափառին չափ ճանչցած ու գնահատած ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ը անցնող տասնամեակներուն: Հ.Մ.Ը.Մ.ի մասին Վեհափառին կոնդակներն ու պատգամները խօսուն են այս իմաստով»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան

հաստատեց, որ «Վեհափա՛ռ Տէր, դուք կ'այցելէք կեդրոն մը, ուրկէ կը ղեկավարուին 106 մասնաճիւղեր: Կեդրոն մը, որ իրարու կը կապէ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ շարքերը՝ Երեւանէն Մոսկուա, Թիֆլիսէն Էջմիածին, Սիտնիէն Պուէնոս Այրէս, Փարիզէն Միւնիխ, Լոս Անճելըսէն մինչեւ Հալէպ եւ Պէյրութ: Հոն ուր հայու թիւն կայ, հոն Հ.Մ.Ը.Մ. կայ: Հ.Մ.Ը.Մ.ը կը հաւաքէ, կը համախմբէ ու կը դաստիարակէ բոլորը՝ հայ ժողովուրդի, հայրենիքի, Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Հայ Դատի մնայուն արժէքներով: Ու ամէն տեղ, հայ եկեղեցւոյ սպասաւորներ իրենց մասնակցութիւնը կը բերին Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն, մերթ դասախօսութիւններով, մերթ խոստման արարողութիւններու իրենց ներկայութեամբ:

«Հ.Մ.Ը.Մ.ը չի կրնար ինքզինք պատկերացնել առանց իր շարքերու ազգային կրօնական դիմագիծին: Անոր համար ալ, յաջորդական սերունդներ յատուկ յարգանք եւ պատկառանք ունեցած են Հայ Եկեղեցւոյ Հայրապետներուն հանդէպ: Ամէն տարի այցելած են անոնց, «Պատուի ա՛ռ»ի կանգնած են, օրին մէկը զանոնք իրենց հարազատ տան մէջ ընդունելու ակնկալութեամբ: Այսօր, այդ ակնկալութիւնն է, որ կ'իրականանայ Արամ Վեհափառի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոն այցելութեամբ, ուր Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը, անցեալն ու այսօրը,



թանգարանն ու «Մարզիկ» պաշտօնաթերթը ներկայ են կողք-կողքի, վկայելու համար այս միութեան հայանուէր աշխատանքին մասին, որ երկու տարիէն կը բոլորէ իր 100-ամեակը»:

Ապա, եղբ. Մկրտիչեան իր խօսքը եզրափակեց ըսելով, որ՝ «Հ.Մ.Ը.Մ.ի երթը տակաւին երկար է ու դժուար: Հայաստանի եւ հայութեան համար ստեղծուած այս միութիւնը շատ բան ունի տալիք իր ժողովուրդի նորահաս զաւակներուն, որպէսզի անոնք երաշխաւորեն մեր ժողովուրդի լուսաւոր ապագան՝ իր ամուր պետութեամբ, հզօր ժողովուրդով եւ անսասան եկեղեցիով»:

Իր խօսքի աւարտին, եղբ. Մկրտիչեան Վեհափառը պատուեց Հ.Մ.Ը.Մ.ի Շուշանածաղիկը ներկայացնող յուշանուէրով մը:

Այնուհետեւ խօսք առաւ Արամ Ա. Վեհափառ եւ Հ.Մ.Ը.Մ.ը նկատեց իր առաքելութեան հաւատարիմ կառոյց մը, որուն առաքելութեան մասնակցիլ կը նշանակէ մասնակից դառնալ ազգային առաքելութեան: Ան ուրախութիւն յայտնեց, որ միութիւնը առաւել եւս կ'ընդարձակուի: Վեհափառը հաստատեց, որ միութիւնը սիրելի եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար, որովհետեւ Ս. Աթոռը խորապէս կը հաւատայ միութեան առաքելութեան եւ բարձր կը գնահատէ զայն: Վեհափառը վստահութիւն յայտնեց այն մասին, որ միութիւնը իր առաքելութիւնը առաւել աշխուժութեամբ պիտի կատարէ հայ ժողովուրդի կեանքին մէջ՝ հաստատելով, որ կաթողիկոսութիւնը միշտ պիտի ըլլայ միութեան զօրակից եւ նեցուկ:

Խօսքերէն ետք, Վեհափառ Հօր առաջարկով, ներկաները երգեցին Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգ «Յառաջ նահատակ»ը, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Վեհափառը շրջեցաւ շրջեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնէն ներս, ծանօթացաւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրատան, թանգարանին, կեդրոնական վարչութեան եւ գործավարութեան գրասենեակներուն:



ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆ

Կիրակի, 23 Հոկտեմբերի յետմիջօրէին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնայեցելեց Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ Վահան Եպս. Յովհաննէսեան, ընկերակցութեամբ քաղաքական հարցերու իր խորհրդական Արթիւր Խանճեանի:



Խատանք կը տանի Միջին Արեւելքի տազնապահար երկիրներէն Եւրոպա ապաստանած հայորդիներու համախմբման եւ կազմակերպման մէջ: Վերջին տարիներուն Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղեր ստեղծուած են Հոլանտայի, Գերմանիոյ եւ Շուէտի տարածքին, ուր Հայաստանեայց Եկեղեցին ունի կառույց եւ գործունէութիւն:

Վահան Եպս. Յովհաննէսեան Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնին մէջ հանդիպում մը ունեցաւ կեդրոնական Վարչութեան անդամներու հետ: Հանդիպումին ներկայ եղան կեդրոնական Վարչութեան Պէտրոսի Նստավայրի անդամները՝ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Րաֆֆի Կէվօղլանեան, Վաչէ Նաճարեան, Իշխան Եղիայեան եւ Եւրոպայի ներկայացուցիչ՝ եղբայր Անդրանիկ Պահարեան:

Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան եւ ապագայ ծրագիրներուն ծանօթանալէ ետք, Վահան Եպս. Յովհաննէսեան խօսեցաւ Եւրոպայի տարածքին եկեղեցւոյ կատարած աշխատանքներուն մասին եւ ողջունեց ազգային բոլոր կազմակերպութիւններուն, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.ին հետ գործակցութեան ամէն տրամադրութիւն:

Հանդիպումը առիթ մը եղաւ քննարկելու ընդհանրապէս մեր ժողովուրդին եւ յատկապէս Եւրոպայի հայութեան առնչուած հարցեր, տրուած ըլլալով որ Հ.Մ.Ը.Մ.ը մեծ աշ-

Հանդիպումին աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Վահան Եպս. Յովհաննէսեանը պատուեց յուշանուէրով մը:

ԴԵՍՊՊԱՆ ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏՉԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆ

Հինգչաբթի, 8 Դեկտեմբերի յետմիջօրէին, Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Սամուէլ Մկրտչեան այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոն, ուր ընդունուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Րաֆֆի Կէվօղլանեանի եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեանի կողմէ:

Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի մէջ ծաւալած գործունէութեան, իբրեւ Հայաստանի Ազգային Սկսուտական Կազմակերպութիւն (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.): Մկրտիչեան խօսեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ծրագիրներուն՝ համաՀ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն, բանակումին, Հայաստանի մէջ ծրագրուած ձեռնարկներուն եւ հրատարակչական տարբեր նախաձեռնութիւններուն մասին:

Դեսպան Սամուէլ Մկրտչեան Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոն իր անդրանիկ այցելութեամբ մօտէն ծանօթացաւ Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառույցը գլխաւորող կեդրոնական Վարչութեան աշխատանքներուն եւ ծրագիրներուն: Այս առիթով, կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան դեսպանին ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ 107 մասնաճիւղերուն գործունէութիւնը: Ան յատուկ շեշտադրումով անդրադարձաւ

Իր կարգին, դեսպան Սամուէլ Մկրտչեան գնահատանքով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան մասին, իբրեւ սերնդակերտ եւ հայակերտ կազմակերպութիւն, որ օրէ օր կը ծաւալի եւ կը տարածուի ամէնուրեք: Ան դրուատիքով անդրադարձաւ միութեան Հայաստանի մէջ ծաւալած աշխատանքներուն մասին, որոնք կը նպաստեն նորահաս սերունդներու առողջ դաստիարակութեան:



Այցելութեան աւարտին, դեսպան Սամուէլ Մկրտչեան ծանօթացաւ Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանին եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի 35 տարուան թիւերուն: Այս առիթով, կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան դեսպանին նուիրեց նորոգ հանգուցեալ եղբ. Բիւզանդ Թորիկեանի «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պատմութիւն» շարքին չորս հատորները:

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ 7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ ՄԻՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



ՀՄ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ, 27-31 Յունիս 2016-ին, Հայաստանի մէջ տեղի ունեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 7-րդ համագումարը, մասնակցութեամբ միութեան 18 շրջաններու եւ իրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան բարձրաստիճան 28 խմբապետ-խմբապետուհիներու: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը ներկայացնէին եղբայրներ Վաչէ Նաճարեան, Օշին Փիրումեան եւ Բագրատ Եսայեան: Համագումարին բացման եւ փակման հանդիսութիւններուն ներկայ գտնուեցան Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ անդամ եղբ. Անդրանիկ Պահարեան:

**ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՍՓԻՒՌԻՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ...**
Բացման օրը, առաւօտեան, համագումարին կազմը այցելեց Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութիւն, ուր դիմաւորուեցաւ ընդհանուր փոխ նախարար Սերժ Սրապիոնեանի կողմէ:

Փոխ նախարարը իր ողջոյնի խօսքին մէջ նշեց, որ «խմբապետները իրենց տունը այցելած են այսօր եւ պատիւ է մեզի համար ձեզ այստեղ դիմաւորելը»:
Սրապիոնեան Հ.Մ.Ը.Մ.ի խմբապետներուն փոխանցեց նախարար Հրանոյշ Յակոբեանի ողջոյնի խօսքը՝ շնորհակալութիւնը սերունդներու առողջ դաստիարակութեան գործին մէջ: «Հ.Մ.Ը.Մ.ը ունի աւելի քան 100 մասնաճիւղ աշխար-

հի հայաշատ համայնքներուն մէջ: Յիգիքական եւ հոգեւոր ներդաշնակութեան կենսակերպը որդեգրելով՝ Հ.Մ.Ը.Մ.ը կրթած է տասնեակ սերունդներ, հայ երիտասարդին սորվեցուցած է ըլլալ արի, հայրենասէր: Անոր մէջ զարգացուցած է պատասխանատուութեան եւ պատուի զգացումը», նշեց ան:
Ապա, Սրապիոնեան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Սփիւռքի նախարարութեան միջեւ 3





Օգոստոս 2014-ին կնքուած յուշագի-
րին, որ աւելի կ'ամրապնդէ փոխա-
դարձ գործակցութիւնը:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական
Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ
Մկրտիչեան յայտնեց, որ «Հ.Մ.Ը.Մ-ը
Սփիւռքի մէկ մասնիկն է, եւ երբ տա-
կաւին ազատ ու անկախ Հայաստան
չկար, Հ.Մ.Ը.Մ. Սփիւռքի մէջ
կը խորհրդանշէր երիտասարդութեան
եւ մարմնակրթութեան նախարարու-
թիւնը»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան
յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի խմբապետա-
կան 7-րդ համագումարը ընթացք առաւ
քիչ առաջ եւ մենք մեր պարտքը նկատե-

ցինք այցելել Սփիւռքի նախարարու-
թիւն: Ուրախ ենք, որ աշխարհի տար-
բեր ծայրերէն հաւաքուած Հ.Մ.-
Ը.Մ.ական երիտասարդ խմբապետները
այսօր այստեղ են: Մենք կը պատրաստ-
ւինք մեծ շուքով նշել մեր միութեան
100-ամեակը եւ համոզուած ենք, որ
Սփիւռքի նախարարութիւնը կը կանգնի
մեր կողքին:

Խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան
համագումարին յուշանուէրը փոխան-
ցեց նախարարի տեղակալին:

... ԵՒ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ
Այնուհետեւ, համագումարին մաս-
նակիցները, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական

Վարչութեան անդամներուն առաջնոր-
դութեամբ, ուղղուեցան Ծիծեռնակա-
բերդ՝ յարգանքի տուրք մատուցելու
Հայոց Յեղասպանութեան զոհերու յի-
շատակին: Համագումարին անունով եւ
յանուն Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին զե-
տեղուեցաւ ծաղկեպսակ մը, նաեւ մե-
խակներ՝ իւրաքանչիւր մասնակիցի
կողմէ: Կատարուեցաւ Տէրունական
աղօթք, ապա մասնակիցներուն կողմէ
հնչեց «Յառաջ նահատակ» քայլերգը:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետա-
կան 7-րդ համագումարին բացումը տե-
ղի ունեցաւ Զորեքշաբթի, 27 Յուլիսին,
Երեւանի «Կովկաս» պանդոկի սրահին
մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդ-
րոնական Վարչութեան անդամ եղ-
բայրներ՝ Գառնիկ Մկրտիչեանի, Վաչէ
Նաճարեանի, Բագրատ Եսայեանի,
Օշին Փիրումեանի եւ Անդրանիկ Պա-
հարեանի:

Համագումարին կը մասնակցէին 18
երկիրներէ Հ.Մ.Ը.Մ.ական 28 բարձ-
րաստիճան խմբապետներ, երկու օժան-
դակ խմբապետներ (քոյր Կարինէ Սի-
սեռեան եւ եղբ. Ռուբէն Նալպանտ-
եան), ինչպէս նաեւ՝ Հայ Մշակութային
«Արարատ» կազմակերպութեան խմբա-
պետը:

Իր ողջոյնի խօսքին մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի
Կեդրոնական Վարչութեան ատենապետ



եղբ. Գառնիկ Մկրտիչեան համագումարին մասնակիցները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգելու յիշատակը մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերուն եւ եղբայրներուն, ինչպէս նաեւ՝ յիշատակը Լիզպոնի նահատակներուն, որոնց նահատակութեան 33-ամեակը կը զուգադիպէր խմբապետական համագումարի բացման օրուան: Ան նաեւ շեշտեց համագումարին կարեւորութիւնը՝ նշելով, որ միութիւնը ակնկալիքներ ունի ըսկառուտական բարձրաստիճան այս համագումարէն:

Ապա, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նաճարեան մասնակիցներուն ներկայացուց համագումարին ծրագիրը եւ աշխատանքներուն ընթացքը՝ նշելով, որ օրակարգը պիտի քննարկէ միութիւնը յուզող սկառուտական զանազան հարցեր եւ ապագայի պատկերացումներ:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան կողմէ բարի գալուստ մաղթեց եղբ. Պերճ Թիւֆէնքճեան՝ յաջողութիւն մաղթելով համագումարի աշխատանքներուն:

Այնուհետեւ, համագումարը անցաւ իր աշխատանքներուն եւ երկու հանգրուանով լսեց մասնակիցներու զեկուցումները իրենց շրջաններու սկառուտական գործունէութեան մասին:

Առաջին օրուան աշխատանքները վերջ գտան ընթրիքով եւ ընկերային յայտագիրով:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ

Համագումարին երկրորդ օրը աշխատանքները ընթացան խմբակային դրութեամբ: Խմբակները առանձին հանդիպումներով քննեցին եւ համագումարին ուշադրութեան յանձնեցին՝

- ա. Գայլիկ-արծուիկ կարգերու գիրքերը:
- բ. Արի-արենոյշ կարգերու գիրքերը:
- գ. Խմբապետին գիրքը եւ պէճերու գիրքը:
- դ. Երէցական կարգերու գիտելիքներու գիրքը:

Սկառուտական գիրքերու քննարկման կողքին, համագումարը զրոյցքննարկումի ենթարկեց ազգային մտահոգութիւն ներկայացնող երկու հարց՝

- Հայախօսութեան դժուարութիւնները եւ անոնց լուծման առաջարկները:
- Նոր սերունդի ակնկալութիւնները սկառուտական շարքերէն:

Երեկոյեան տեղի ունեցաւ նաեւ երրորդ զրոյցքննարկում մը՝ նիւթ ունենալով սկառուտական աշխատանքներու դիմագրաւած ընդհանուր դժուարութիւնները եւ անոնց յաղթահարման միջոցները: Զրոյցը վարեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

ԵՐՐՈՐԴ ՕՐԸ

Համագումարին երրորդ օրը յատկացուեցաւ շրջապտոյտի: Մասնակից խմբապետ-խմբապետուհիները, մեծ մասը առաջին անգամ ըլլալով Հայաստան այցելող, հայրենի հողին, բնութեան,



ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 7-րդ համագումարին մասնակցեցան 28 խմբապետ-խմբապետուհիներ, որոնք ներկայացուցին հետեւեալ շրջանները.- Անիթա Կորկիսեան, Փաթիլ Պոզեցեան (Ալմելո), Կարինէ Գնտոյեան (Արեւմտեան Ս. Նահանգներ), Մարտիկ Պերպերեան (Աւստրալիա), Լեւոն Սարմազեան, Վաչէ Նաճարեան (Գանատա), Արտա Զէյթունլեան (Լիբանան), Արտա Յալլաճեան (Լոնտոն), Ժինա Նիկողոսեան (Կիպրոս), Գարիկ Քոչարեան, Գեորգ Գասպարեան, Սեւակ Նազարեան (Հայաստան), Գեորգ Միքայէլ Նալպանտեան, Ակուսթին Անալեան, Մարիանո Ա. Տօնիկեան (Հարաւային Ամերիկա), Մարալ Յամօ (Պաղտատ), Սագօ Պաթմանեան (Սթրքիլմ), Շաղիկ Շատոյեան (Վիեննա), Դուին Քիրքճեան, Մանէ Անդրէասեան (Ֆրանսա), Վիգէն Մինասեան, Լոռի Պարազեան (Յունաստան), Կարինէ Սարգիսեան (Ստերթելիա), Ժանօ Քէթնճեան (Քուէյթ), Եղիա Քիլէճեան (Սուրիա), Նայիրի Ասլանեան (Առնհեմ), Հարմիկ Նաւասարդեան, Արինէ Աղասեան (Իրան- Հ.Մ.Ա.Կ.):





պատմական ու տեսարժան վայրերուն հետ մօտէն ծանօթանալու առիթը ունեցան դէպի Սեւանայ լիճ եւ Դիլիջան կատարուած պտոյտով մը, որ ընկերային հաճելի ու յիշատակելի պահեր պարգեւեց բոլորին:

Շրջապտոյտէն վերադարձին, երեկոյեան, համագումարին մասնակիցները անդրադարձան 2018-ին նախատեսուած Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ձեռնարկներուն եւ այս առթիւ փոխանցեցին իրենց առաջարկներն ու կարծիքները: Հետաքրքրական միտքեր արտայայտուեցան համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումին, 100-ամեակի միջազգային ճամպորիի մը կազմակերպման եւ ըսկառուտական զանազան նախաձեռնու-

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական առաջին համագումարը տեղի ունեցած է 18-21 Փետրուար 1982, Աթէնք: Համագումարին գլխաւոր օրակարգը եղած է սկառուտական ընդհանուր կանոնագրութեան մշակումը եւ համագաղութային բանակումներու յատուկ ծրագիրներու պատրաստութիւնը: Համագումարը քննած է նաեւ սկառուտական շարքերու ազգային գիտելիքները ներդաշնակող դաստիարակչական յատուկ ուղեցոյց մը, որուն կիրարկումը վստահուած է շրջաններուն, ըստ տեղական պայմաններուն եւ կարելիութիւններուն:

● Երկրորդ համագումարը կատարուած է 26 Յունիսէն 5 Յուլիս 1988, Քալիֆորնիա: Դաստիարակչական բազմաթիւ հարցերու քննութեամբ ծանրաբեռնուած համագումարին օրակարգը յատկանշուած է սկառուտական եւ ազգային-պահանջատիրական նիւթեր արծարծող տասնեակ մը դասախօսութիւններու ներկայացումով:

● Երրորդ համագումարը տեղի ունեցած է 14-23 Դեկտեմբեր 1996, Սիտնի: Համագումարը առաւելաբար զբաղած է սկառուտական դասագիրքերու պատրաստութեամբ: Համագումարը քննած է նաեւ միութեան զանազան շրջաններու սկառուտական աշխատանքները համադրելու եւ անոնց յարաբերութիւնները աւելի եւս ամրապնդելու կարելիութիւնները:

● Չորրորդ համագումարը, ութը տարուան ընդմիջումէ ետք, կատարուած է 9-14 Օգոստոս 2004, մայր հայրենիքի մէջ՝ Ծաղկաձոր: Համագումարը ընդհանուր արժեւորում մը կատարած է միութեան սկառու-

տութեան պարզած իրավիճակին եւ օրուան պահանջներուն լոյսին տակ՝ ծրագիրներ առաջադրած է սկառուտական շարքերու ազգային-միութենական դաստիարակութեան ամրապնդման համար: Համագումարին իրենց մասնակցութիւնը բերած են Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան ներկայացուցիչները:

● Հինգերորդ համագումարը տեղի ունեցած է 24-29 Օգոստոս 2008, Ծաղկաձոր: Համագումարը քննած է սկառուտական Վկայեալ եւ Արարատեան կարգերու գիտելիքները, ճշդած է միութեան խմբապետներու վերաորակաւորման դասընթացքին նիւթերը եւ պատրաստած է մոկլիներու գործունէութեան ծրագիր: Համագումարին իրենց մասնակցութիւնը բերած են Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան, «Նայիրի» եւ «Սիփան» միութիւններու ներկայացուցիչները:

● Վեցերորդ համագումարը տեղի ունեցած է 20-24 Օգոստոս 2012, Ծաղկաձոր: Համագումարը վերամշակած է միութեան սկառուտական կանոնագրութիւնը եւ ցարդ օգտագործած դասագիրքերը: Քննարկուած են նաեւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտութեան կատարելիք աշխատանքները եւ ազգային-ընդհանրական մտահոգութիւն ներկայացնող զանազան հարցեր: Համագումարին իրենց մասնակցութիւնը բերած են Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան, «Նայիրի» եւ «Սիփան» միութիւններու ներկայացուցիչները:

Թիւններու մասին (յատուկ փողկապի պատրաստութիւն, Եռաբլուրի մէջ խոստումի վերանորոգում, համացանցային ծրագիրներու մշակում, վաստակաշատ սկաուտներու շքանշաններու տուչութիւն, 100 ծառեր ցանելու ծրագիր եւ այլն):

ՋՈՐՐՈՐԴ ՕՐԸ

Սկաուտական գիրքերու սպառիչ քննարկումէն ետք, համագումարին չորրորդ օրուան աշխատանքները կեդրոնացան հիմնական երեք նիւթի շուրջ-

ա. Միջ-շրջանային Վկայեալ կարգի եւ խմբապետներու վերաորակաւորման դասընթացք:

բ. Արարատեան կարգ:

գ. Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին նուիրուած Համա-Հ.Մ.Ը.Մ-ական 11-րդ բանակում (2018-ի ամառ):

Այնուհետեւ, առանձին օրակարգով քննուեցան սկաուտական կանոնադրութեան բարեփոխման առաջարկները, որոնց վերջնական բանաձեւումն ու որդեգրումը կատարուեցաւ յաջորդ օր:

Նոյն օրը, յետմիջօրէին, համագումարը արժարժեց սկաուտական շարքերը յուզող հիմնական այլ նիւթեր-

- Միջ-շրջանային սկաուտական աշխատանքներ:
- Երիտասարդական Ֆորում:
- Համաշխարհային Սկաուտական Շարժում:
- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.:



ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

Կիրակի, 31 Յուլիսի կէսօրին, համա-Հ.Մ.Ը.Մ-ական խմբապետական 7-րդ համագումարը հասաւ իր աշխատանքներու աւարտին: Երկու նիստով հաստատուեցան սկաուտական կանոնադրութեան փոփոխութիւնները, ապա կատարուեցան յուշանուէրներու փոխանակումներ, համագումարի աշխատանքներու քննարկում եւ արժեւորում:

Հոսկ, համագումարը փակուեցաւ կէսօրուան ժամը 2-ին, Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջ նահատակ» քայլերգով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՒՐՈՊԱՅԻ ՄԱՄՆԱԾԻԻՂԵՐՈՒ ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ՍԵՄԻՆԱՐ



Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ, այս ամառ, առաջին անգամ ընդհանուր, Շուեդի մէջ տեղի ունեցաւ միութեան Եւրոպայի մասնաճիւղերու խմբապետներու Վկայեալ կարգի սեմինար:

Սեմինարը իրագործուեցաւ 26-28 Օգոստոս 2016-ին, Ֆլէնի շրջանի Կիլուիլսթիւկան բանակավայրին մէջ:

Սեմինարին պաշտօնական բացումին ներկայ գտնուեցան Հ.Յ.Դ. Շուեդի շրջանի ներկայացուցիչ Յակոբ Խաչերեան, Սթոքհոլմի եւ Սոտերթելիոյ մասնաճիւղերու վարչական ներկայացուցիչներ եւ Եւրոպայի Վկայեալ կարգի խմբապետական գործադիր կազմի անդամ եղբայրներ՝ Արմանտ Ապրամեան, Ռուբէն Նալպանտեան եւ Ֆէտի Թաթրա:

Այս առթիւ իր արտասանած խօսքին մէջ, Յակոբ Խաչերեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, որ առիթը ընծայեց Շուեդի շրջանին հիւրընկալելու այս սեմինարը, շեշտելով սկաուտական այս կարգին կարեւորութիւնը խմբապետ-

ներուն համար: Գործադիր մարմինին անունով խօսք առաւ եղբ. Ֆէտի Թաթրա: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ անդրադարձաւ Վկայեալ կարգի ծրագրին գործադրութեան եղանակին:

Պատահական որոշում մը չէր Կեդրոնական Վարչութեան նախաձեռնած Վկայեալ կարգի սեմինարը, նկատի ունենալով վերջին տարիներուն միութեան Եւրոպայի մասնաճիւղերուն սկաուտական թիւերուն աճը եւ զանոնք նոր, որակեալ եւ պատրաստուած պատասխանատուներով օժտելու անհրաժեշտութիւնը: Այս նպատակով ալ, Կեդրոնական Վարչութիւնը յառաջացուցած էր խմբապետական գործադիր կազմ մը՝ բաղկացած վաստակաշատ քոյր-եղբայրներէ: Կազմին մաս կը կազմէին քոյր Կարինէ Սիսեռեան (Փարիզ), եղբայրներ Արմանտ Ապրամեան (Լոնտոն), Թորոս Հալլաճեան (Գանատա), Ռուբէն Նալպանտեան (Գերմանիա) եւ Ֆէտի Թաթրա (Շուեդի): Կեդրոնական Վարչութեան կողմէ ներկայացուցիչն էր եղբ. Վաչէ Նաճարեան:

Վկայեալ կարգը բաժնուած է երեք

հանգրուանի՝ տեսական, գործնական եւ փորձառական:

Սեմինարին մասնակցութեան թիւն էր 20 քոյրեր-եղբայրներ՝ հետեւեալ շրջաններէն.- Լոնտոն (5), Առնհէմ (2), Վիեննա (2), Սթոքհոլմ (5), Սոտերթելիա (6):

Երեք օրուան ընթացքին, սեմինարին

մասնակիցները առիթը ունեցան իրարու ծանօթանալու, իրենց շրջաններուն մասին զեկուցումներ փոխանցելու եւ պարզ ու հաճելի ձեւով փոխանցուած դասախօսական նիւթեր ընկալելու:

Սեմինարի մասնակիցներուն այցելեց եւ դասախօսութիւն մը ներկայացուց Շուեդի սկաուտական կազմակեր-





պուլթեան դաստիարակչական բաժինէն Սասա Ուրէպրինկ: Մասնակիցներուն տրուած պարտականութիւններու ճամբով՝ ան գիտելիքներ ներկայացուց, թէ պատանիները ի՞նչպէս կրնան չարաչար

հումի ենթարկուիլ իրենց շրջապատէն: Ան խմբապետներուն անհրաժեշտ թելադրանքներ փոխանցեց, թէ ի՞նչպէս պէտք է վարուիլ նման պարագաներու: Հեռահաղորդակցութեամբ, սրբայփի

ճամբով, Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Խորէն Արք. Տողրամաճեան ներկայացուց «Բարոյական հասկացողութեան կարեւորութիւնը» նիւթը:

Հ.Մ.Ը.Մ.ի խմբապետներուն դասախօսութիւն մը ներկայացուց նաեւ Շուէտի ուղղափառ եկեղեցւոյ սկառտական շարժումի նախագահ Սամէր Ասօ: Ան բանակավայր այցելեց սկառտական իր շարժումի գանձապահ Ազիզ Նահմէի հետ:

Սամէր Ասոն ներկայացուց սկառտական իր շարժումը, որուն մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Սոսերթեւիոյ սկառտական ճիւղը: Ան խօսեցաւ նաեւ եւրոպական այն կազմակերպութիւններուն մասին, որոնք նիւթապէս կ'օժանդակեն սկառտական աշխատանքներու:

Դասախօսութիւններէ անկախ, սեմինարի մասնակիցներուն փոխանցուեցան հետեւեալ գիտելիքները-

Ա. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

- Գիտնալ եւ մեկնաբանել Հ.Մ.Ը.Մ.ի սկառտութեան նպատակը:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Բ. ԱԶԳԱՅԻՆ

- Ըմբռնել եւ փոխանցել Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտին դերը Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն մէջ:

Գ. ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

- Ծանօթանալ համաշխարհային ըսկաուտութեան պատմութեան եւ կառուցին:

- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի դերը՝ համաշխարհային սկաուտական կառուցին մէջ:

- Հետապնդել եւ նոր ձեւեր որդեգրելով կիրարկել սկաուտական գործելակերպի չորս հիմնական սիւները:-

- ա. Խոստում եւ դաւանանք.
- բ. Խմբակային դրութիւն.
- գ. Սկաուտական կարգեր եւ մասնագիտական պէճեր.
- դ. Բնութեան մէջ աշխատանքներ.

- Ծանօթանալ, սերտել եւ ուսումնասիրել խմբակի, խումբի եւ միաւորի դրութեան կարեւորութիւնը եւ գործելակերպը:

- Խումբի աստիճանաւորական ժողովի եւ միաւորի խմբապետական ժողովի կարեւորութիւնը եւ հանգամանքը:

- Սկաուտական աշխատանքներ քննարկելու եւ արժեւորելու եղանակը:

- Ըմբռնել փոխ յարաբերութիւններու հասկացողութիւնը (Խմբապետ-



Փոխ Խմբապետ - Վ.Առաջնորդ-Ծնողք):

- Խմբապետի հասկացողութիւնը (խումբ վարել, դաստիարակել):

Դ. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ

- Քաղաքացիական դաստիարակութեան անհրաժեշտութիւն (կրկնակի պատկանելիութեան հարց):

Ե. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

- Ըմբռնել բարոյականութեան հասկացողութեան կարեւորութիւնը:

- Պատանիներու ապահովութիւն:

Երեկոները, խարոյկին շուրջ, խմբապետները իրենց ձիրքերն ու փորձառութիւնները ներկայացուցին ընկերային հաճելի մթնոլորտի մէջ:

Սեմինարին աւարտին, բոլորը իրարմէ բաժնուեցան այն խոստումով, որ իրենց շրջաններէն ներս սկաուտական յայտագիրներուն ոճը, ձեւն ու գիտելիքներու փոխանցման եղանակը պիտի բարելաւուի՝ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ-ի ըսկաուտութեան զարգացման եւ ի շահ հայապահպանման աշխատանքներու ամրապնդման:

1866-2016. ԾՆՆԴԵԱՆ 150-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ Թ. ՀԻՆԴԷԱՆ. ՆՈՐԱՀԱՍ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՄԱՐԴԱԿԵՐՏՄԱՆ ՈՒ ՀԱՅԱԿԵՐՏՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԻՐԸ

Ն. Պերպերեան
ԱԹԵՆՔ

«Ազգայնությունն ամենին մեզ բարիքն է մարդուն համար, եթե գիտե՛ք զայն գործածել: Իսկ երբ ազգայնությունն ընդունող ժողովուրդը փոխ է եւ խաղալիկ մը կը կարծէ զայն, այն ատեն ազգայնությունն ամենին չախող արդիւնքները կրնայ ունենայ: Վկայ է պայմանությունը:

«Ազգայնությունն անկարգապահությունն է անիշխանությունն չէ: Ազգայնությունն ինքնակամ հպարտությունն է օրէնքին, որ զմեզ կը պահպանէ մեզմէ իւրաքանչիւրին ներսիդին մրափող բարբարոսութեան դէմ: Լրջութեամբ, անկեղծութեամբ, հանդարտութեամբ աշխատակցիլ քաղաքակրթութեան յառաջդիմութեան, ահա՛ Ազգայնութիւնը: Հետեւի (չինազանդի) օրէնքներուն, պոռալով պոռչալով, կիրքերու անչնայտութիւնը ըլլալով, ահա՛ բարբարոսութիւնը, ահա՛ անիշխանութիւնը: Ազգայնութիւնը պայտասնապարտութեան արտաքսում չէ. ընդհակառակը, որքան աւելի ազգայն ըլլայ մարդ՝ այնքան աւելի պայտասնապարտութիւններ ունի: Քիչ մը մտածել կը բաւէ համոզուելու համար այս մտայնութեան»:

Ազատ մարդու եւ ազատ հայու այսպիսի խոր եւ իրա՛ւ ընկալումով ու պատկերացումով պարբեցաւ եւ գործեց հայ ժողովուրդի մեծ գաւակներէն Յովհաննէս Թ. Հինդլեան, որուն ծննդեան 150-ամեակը կը նշենք այս տարի:

Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարական ու բարոյական աւանդներու հոնաւորման մէջ, գլխաւոր ներդրում ունեցած հիմնադիրներու շարքին, իր առանձնապատուկ տեղը կը գրաւէ Յովհաննէս Թ. Հինդլեան:

Յ. Հինդլեան արդէն հաստատուած հեղինակութիւնն էր 1918-ին, երբ միացաւ մեր ժողովուրդի նոյնքան արժանաւոր մեծերէն Շաւարշ Քրիսեանի եւ Գրիգոր Յակոբեանի հետ՝ հոյլ մը նուիրեալներու անձնազօր ջանքերով հիմնադրելու համար Հ.Մ.Ը.Մ-ը, իբրեւ միաժամանակ մարզական եւ սկստական կազմակերպութիւն: Անոնց նպատակն էր ի մի բերել եւ, ազգային-քաղաքական ու ընկերային-բարոյական վսեմ գաղափարներու դրօշին տակ, ընդհանուր եւ մէկ մեծ կազմակերպութեան մէջ համախմբել մինչ այդ Պոլսոյ թէ՛ հայաշխարհի տարածքին յառաջացած հայ մարզական եւ սկստական միութիւնները:

Հինդլեան ծնած էր 1866-ին, Պոլիս: Նորահաստատ Պէրպերեան վարժարանի անդրանիկ եւ շնորհալի սաներէն էր, որ կանուխէն նետուեցաւ մանկավարժական ասպարէզ՝ իր ժամանակի ազգային ամէնէն յառաջադէմ գաղափարներով սերունդ հասցնելով:

Նորահաս սերունդը ազգային ոգիով եւ գաղափարական ու բարոյական վսեմագոյն արժէքներով դաստիարակելու առաքելութեան ամբողջապէս նուիրուած մեծ մանկավարժը, 5 Հոկտեմբեր 1909-ին, 1908-ի Օսմանեան Սահմանադրութեամբ հաստատուած համեմատաբար ազատ գործունէութեան պայմաններէն օգտուելով, Գալուստ Մալաթեանի հետ գործակցաբար հիմը դրաւ Պոլսոյ հայոց Նոր Դպրոց վարժարանին, որուն կոչումն ու առաքելութիւնը Հինդլեան առիթով մը տարազած է հետեւեալ պարզ, այլեւ խորիմաստ խորհրդածութեամբ.-

«Գիտական միտք, որքա՛ն հազուագիւտ բան մըն է ան տակաւին մարդոց մէջ: Որքա՛ն յաճախ շպարն իբր իրականութիւն, ձեւն իբր հիմ, խօսքն իբր գործ կ'ընդունինք: Որքա՛ն յաճախ կը բռնուինք շողշողուն, կախարդիչ տրամասացութիւններու ոստղէն...: Առանց շատ հեռուններն երթալու, հաշուենք անգամ մը, թէ Սահմանադրութեան վերահաստատութենէն ի վեր որքա՛ն անգամներ սխալեցանք, խաբուեցանք եւ տուժեցինք, միմիայն գիտական մտքի պակասութեամբ, այսինքն՝ միմիայն անոր համար, որ մեր կիրքերուն անձնատուր եղանք տղու մը պէս, փոխանակ մեր զգացումները բանականութեան հակակշռին ենթարկելու. միմիայն անոր համար, որ դրական պարագաները միայն ուզեցինք տեսնել, փոխանակ հաշուի առնելու ժխտական պարագաներն ալ. միմիայն անոր համար, որ կեղծն անկեղծէն զանազանելու չափ յստակատես չկրցանք ըլլալ...»:

Յովհաննէս Հինդլեան արդարօրէն Ուսուցչապետ հռչակեցաւ իր ժամանակակիցներուն կողմէ: Եւ պատահական չէր, որ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան իր յառաջատար մասնակցութիւնը բերելով՝ Հինդլեանի ներդրումը մեծ եղաւ նորաստեղծ կազմակերպութիւնը «Բարձրագի՛ր-բարձրացուր» նշանաբանով գինելու գործին մէջ:

Եթէ Հ.Մ.Ը.Մ-ը Սփիւռքի տարածքին իրաւամբ դարձաւ նորահաս մեր սերունդներուն մարդակերտումի եւ հայակերտումի գլխաւոր հնոցներէն մէկը, բացատրութիւնը պէտք է փնտռել Հինդլեանի պայծառատեսութեամբ գաղափարակիր-

ներու հաստատած հիմնարար արժեքներուն եւ սկզբունքներուն մէջ: Ազգային-հասարակական գործիչի Հ.Մ.Ը.Մ.ական կերպարը սնանեցաւ եւ միս ու ոսկոր կապեց Հինդլեաններու պատգամներով, որոնց շարքին, օրինակ՝

«Խօսած ըլլալու համար խօսիլ... Այս հիւանդութիւնը ուրիշ ձեւ մ'ալ ունի: Որովհետեւ պէտք է, որ անպատճառ խօսինք, չենք անդրադառնար նախապէս՝ մեր ըսելիքին վրայ, հսկողութիւն ի գործ չենք դնել մեր ուղեղին վրայ, որ աշխարհիս ամէնէն չարածճի բանն է. տղու մը պէս ազատ մուտք կու տանք մեր գանկին մէջ՝ ամէն տեսակ գաղափարներու: Մինչեւ հոս վնաս չկայ ժողովին համար, բայց գէշն հոն է, որ մեր գանկին մէջ անոնց մուտք տալէ վերջ՝ ժողովասրահին մէջ ալ ազատ մուտք կու տանք անոնց, ինչ որ անիրաւութիւն մըն է, բռնաբարութիւն մըն է հանդէպ ժողովին: Ժողովն իրաւունք ունի պահանջելու, որ մեր ըսածները տրամաբանական ըլլան նախ, եւ յետոյ՝ տրամաբանօրէն առնչութիւն ունենան քննելի խնդրոյն հետ: Որչա՛փ իրաւունք ունի Ռընան, երբ կ'ըսէ. «Ամէն ինչ առատ է, բացի ողջմտութենէն»: Եւ որչափ սիրելի են մեզ մեր այն (ազգային) երեսփոխանները, որոնց մէջ որոշ կերպով կը տեսնուի այդ չքնաղ բարեմասնութիւնը: Բայց որքա՛ն աւելի սիրելի պիտի ըլլային անոնք մեզ, եթէ Գրիգոր Զօհրապ էֆէնտիին պէս՝ իրենց ողջմտութեան միացնէին խօսքերու սեղմութիւնը: Ունկնդիր երեսփոխանները դպրոցականներ չեն վերջապէս, եւ ատենաբան երեսփոխանները տեսակ մը թշնամանք ըրած կ'ըլլան անոնց՝ անհարկի եւ անվերջանալի մանրամասնութիւններով եւ կրկնութիւններով երկարելով իրենց պատճառաբանութիւնը»:

Շեշտը դնելով «Առողջ մարմնի մէջ՝ առողջ միտք» մշակելու հրամայականին վրայ, Հինդլեան եւ իր ընկերները Հայաստանի ու հայութեան պաշտամունքը կիզակէտը դարձուցին իրենց հիմնադրած համահայկական շարժումին: Տակաւին նոր կազմուած՝ յատուկ առաքելութիւն ուղարկեցին Երեւան, որպէսզի նորահաստատ Հայաստանի Հանրապետու-



թեան կառավարութեան հետ անհարժեշտ համակարգումը յառաջացնեն: Եւ այդպէս ալ եղաւ: Այդ ճամբով նաեւ Հ.Մ.Ը.Մ. մարմնաւորեց Դաշնակցութեան գաղափարականօրէն ուղեկից այն շարժումը, որ դէպի հայ լեզուն եւ հայ մշակոյթը, դէպի հայկական ասպետութիւնն ու Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանը լարեց սիրտն ու միտքը, բազուկն ու քայլերը հայութեան նորահաս սերունդներուն՝ ի Հայաստան թէ ի սփիւռս աշխարհի:

Քեմալականութեան «յաղթարշաւ»էն եւ Մեծ Եղեռնէն վերապրած հայութեան երկրորդ տարագրութենէն ետք, Յ. Հինդլեան մնաց Պոլիս եւ մինչեւ մահ (1950) իր հիմնադրած Պոլսոյ Նոր Դպրոցով հաւատարիմ մնաց իր պաշտած արժեքներով սերունդ հասցնելու առաքելութեան:

Մարդակերտումի եւ Հայակերտումի իր գաղափարախօսութիւնն ու պատգամը առաւելագոյնս խտացնող՝ «Արդարակշիռ ազգասիրութիւնը» խորագրով Յ. Հինդլեանի աշխատասիրութենէն քաղուած հետագայ խորհրդածութեամբ կ'արժէ եզրափակել մեծարժէք Հայուն ծննդեան տարեդարձին նուիրուած այս ակնարկը:-

«Ազգին ներկայ ճգնաժամին մէջ, իրաւունք չունինք իմաստասիրական-ընկերային առաւել կամ նուազ յանդուգն տեսութիւններով զբաղելու, եւ ժողովուրդին արդէն գրգռուած երեւակայութիւնն ա'լ աւելի գրգռելու: Ազգասիրութիւնն իրողութիւն մ'է, եւ կարեւոր եղող բանն է ոչնչացընել այն նախապաշարումներն որոնք, մակաբոյժներու պէս փակած ազգասիրութեան, անոր արիւնը կը քամեն: Նպատակս է մէկ երկու խօսքով ցոյց տալ այդ նախապաշարումներէն մէկ քանին եւ ցայտեցնել արդարակշիռ ազգասիրութիւնը:

«Շատերու համար ազգասիրութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ խօլ կիրք մը, եւ շատ մը խոհական, այսինքն ճշմարիտ ազգասէրներ, որոնք ջղագրգիռի յատուկ շարժումներով ու խօսքերով չեն արտայայտել իրենց ազգասիրութիւնը, Ազգին շահերուն հանդէպ անտարբերներ կը նկատուին, իսկ եթէ Ազգին թերութիւնները քննադատեն անոնք, ազգատեացներ կը համարուին: Ընդհակառակն՝ դրուտեաց կայթերու եւ հիացման կ'արժանան անոնք, որոնց ազգասիրութիւնն ի յայտ կու գայ մասնաւոր ջղագրգռութեամբ եւ թերակշիռ լաւատեսութեամբ կամ յոռետեսութեամբ:

«Արդ, ազգասիրութիւնը, ճշմարիտ, արդիւնաւոր ազգասիրութիւնն աւելի բանականութիւն է քան զգացում, այսինքն զգացում մ'է, որ այն ատեն միայն կ'ըլլայ օգտակար՝ երբ բանականութենէն կը կառավարուի»:

Ազգին ներկայ ճգնաժամին մէջ, իրաւունք չունինք իմաստասիրական-ընկերային առաւել կամ նուազ յանդուգն տեսութիւններով զբաղելու, եւ ժողովուրդին արդէն գրգռուած երեւակայութիւնն ա'լ աւելի գրգռելու: Ազգասիրութիւնն իրողութիւն մ'է, եւ կարեւոր եղող բանն է ոչնչացնել այն նախապաշարումներն որոնք, մակաբոյժներու պէս փակած ազգասիրութեան, անոր արիւնը կը քամեն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

ԾԱՆՕԹԱՆԱՆՔ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ
ԵՂԲ. ԱՐՄԷՆ ՔԵՕՇԿԵՐԵԱՆ



Մ.Ը.Մ-ի Հայկյի մասնաճիւղի վաստակաշատ անդամներէն եղբ. Արմէն Քէօշկէրեան ծնած է Պոսթան Փաշա, 1951-ին: Այնթապցի ծնողքի զաւակ, եղբ. Արմէն յաճախած է Ազգ. Զաւարեան վարժարան: Նախնական կրթութիւնը ստանալէ ետք, ան նետուած է կեանքի ասպարէզ: Հազիւ եօթը տարեկան, անդամագրուած է Հ.Մ.Ը.Մ-ին եւ կէս դար ծառայած է անոր, իբրեւ գայլիկ, սկաուտ, մարզիկ եւ վարչական:

Սկաուտական շարքերու մէջ, եղբ. Արմէն անցած է բոլոր աստիճաններէ՝ հասնելով մինչեւ Խմբապետի աստիճանին եւ գայլիկ Աքելայի պաշտօնին: 18 տարի ան ստանձնած է Հայկ-




յի գայլիկներու ընդհանուր խմբապետի պատասխանատուութիւնը, իբրեւ Աքելա:

1967-1972, եղբ. Արմէն Քէօշկէրեան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթպոլի Բ. խումբին: Ապա, 6 տարի եղած է Ֆուլթպոլի յանձնախումբի անդամ, ստանձնելով ատենադպիրի պաշտօնը: 12 տարի ան վարած է Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզի յանձնախումբի գանձապահութեան պաշտօնը: 10 տարի եղած է մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի անդամ, 8 տարի՝ Հայկյի մասնաճիւղի վարչական, 6 տարի՝ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամ եւ գանձապահ, իսկ 4 տարի ալ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ, 2007-2011: Ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ միջմասնաճիւղային բազմաթիւ բանակումներուն՝ Ղընեմիէի, Եագուպիէի, Քեսապի եւ Դամասկոսի մէջ, նաեւ՝ համա-Հ.Մ.Ը.Մ-ական 2-րդ ընդհանուր բանակումին (1980), Քլամար, Ֆրանսա:

Իբրեւ Սուրիոյ պատուիրակութեան պատասխանատու, եղբ. Արմէն 2009-ին մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ-ական 8-րդ մարզախաղերուն, Երեւան, Հայաստան: 2013-ին, միութեան 95-ամեակին առիթով եւ երկարամեայ իր ծառայութիւններուն առիգնահատանք, ան պարգեւատրուած է «Ծառայութեան» շքանշանով:

Հ.Մ.Ը.Մ-ական իր բեղուն կեանքին առընթեր, եղբ. Արմէն Քէօշկէրեան ունեցած է ազգային-հասարակական աշխոյժ գործունէութիւն: Երկար տարիներ ան եղած է «Զաւարեան» սրահի վարչութեան անդամ եւ «Զաւարեան» վարժարանի հոգաբարձու: Շրջան մը մաս կազմած է նաեւ «Զաւարեան» թատերախումբին:

Եղբ. Արմէն Քէօշկէրեան ընտանեկան իր երդիքը կազմած է 1985-ին եւ բախտաւորուած է երկու մանչ զաւակով:





Le progrès inspire les gens. Nous inspirons le progrès.

Physiquement, mentalement ou émotionnellement, nous n'arrêtons pas de grandir et de nous développer, tout comme nos chances de réussir. À chaque étape de cette évolution, nos innovations et nos services vous accompagnent et s'adaptent à vos besoins.

Bank Audi

Allez au-delà de votre potentiel

LIBAN
SUISSE
FRANCE
JORDANIE
SYRIE
EGYPTE
SOUDAN
ARABIE SAOUDITE
QATAR
MONACO
TURQUIE

ABU DHABI BUREAU DE REPRÉSENTATION



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐԻ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

24-31 Յուլիսին, Փարիզի մէջ տեղի ունեցաւ սկաուտական միջազգային սեմինար մը, մասնակցութեամբ՝ Համաշխարհային Սկաուտական Շարժումի 6 տարածաշրջաններու 32 կազմակերպութիւններու ներկայացուցիչներու: Սեմինարին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը ներկայացուց սկաուտական եւրոասիական տարածաշրջանի անդամ քոյր Նարէ Խլղաթեան:

Նոր գիտելիքներու ու փորձառութեան ձեռքբերման եւ սկաուտական լայն շրջանակի մը ծանօթացման շնորհիւ, քոյր Նարէն ծանօթացաւ սկաուտական ժամանակակից նիւթերու

եւ անոնց մատուցման նորագոյն մեթոտներուն:

Սեմինարը կազմակերպող Համաշխարհային Սկաուտական Շարժումի կեդրոնական գրասենեակը եւ զայն հիւրընկալող Ֆրանսայի սկաուտական կազմակերպութիւնը ճիգ չէին խնայած ապահովելու անհրաժեշտ բոլոր պայմանները՝ սկաուտական եզակի այս հանդիպումը բովանդակալից եւ հետաքրքրական դարձնելու համար:

Սեմինարին աշխատանքներուն առընթեր, տեղի ունեցաւ մասնակից պատուիրակութիւններու երկիրներու մշակութային առանձնատկութիւններու ներկայացում: Այս առիթով, քոյր Նարէ Խլղաթեան հանդէս եկաւ հայկական աւանդական տարազով եւ ուտեստով:



Թղթակից ԵՐԵՒԱՆ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի եւ Դանիոյ ազգային սկաուտութեան միջեւ գործակցութիւնը կը շարունակուի: Փորթ Արթիւրի բանակումէն ետք, յաջորդ հանդիպումը Հաունս Օրլլի մէջ էր: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի երկու անդամներ՝ Աննա Սարաճեան եւ Գէորգ Օհանեան, իբրեւ պա-

ՀԱՅ ԴԱՆԻԱԿԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

տասխանատու կազմի անդամներ, մասնակցեցան հիւսիսային Եւրոպայի մեծագոյն բանակավայրերէն մէկուն մէջ կազմակերպուած 15 օրուան բանակումին:

15 օրուան ընթացքին, յիշատակելի մեծ փորձառութիւն ձեռք ձգեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ներկայացուցիչները, որոնց համար գլխաւոր նորութիւնը եղաւ... ծովային գործունէութիւնը: Բանակավայրին ծովեզերեայ դիրքը եւ յարմարութիւնները մեծ առաւելութիւններ էին, որոնցմէ կարողացան օգտուիլ բոլորը: Երկու շաբաթ, քոյր Աննան եւ եղբայր Գէորգը առիթը ունեցան աշխատելու հիանալի մարդոց եւ պատասխանատուներու հետ, մարդիկ՝ որոնք անկախ իրենց տարիքէն, ջանք չխնայեցին իրենց հարուստ փորձառութիւնը բաժնեկցելու հայրենի սկաուտներուն հետ:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՄԻԱԲՈՐՆԵՐՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԲԻԲՐԱԿԱՆԻ ՄԷՁ

Թղթակից ԵՐԵՒԱՆ



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի միաւորներուն 2016-ի բանակումը տեղի ունեցաւ 7-11 Օգոստոս 2016-ին, Բիւրականի բանակավայրին մէջ, մասնակցութեամբ Աբովեանի, Էջմիածինի եւ Հրազդանի միաւորներէն 75 սկաուտներու:

Հնգօրեայ բանակումը ունեցաւ մարզական եւ դաստիարակչական գիտելիքներով հարուստ յայտագիր: Ներկայացուցան սկաուտական նիւթով հետաքրքրական դասախօսութիւններ:

Բանակողները կատարեցին արշաւ մը դէպի Ամբերդ, ուր անոնք ծանօթացան մեր ժողովուրդի միջնադարեան պատմութեան առնչուած կարեւոր մէկ կառոյցին պատմութեան:

Բանակումին շնորհիւ սկաուտներ

կարողացան տարուան ընթացքին իրենց ձեռք բերած տեսական գիտելիքները գործնապէս կիրարկել: Օգտակար եւ հաճելի ժամանակ մը անցընելով, բոլորը տուն վերադարձան անմոռանալի յիշատակներով:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԳԱՅԼԻԿԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Գայլիկական կեանքի ամէնէն սպասուած իրադարձութիւնը կարելի է նկատել տարեկան բանակումը, որ ըստ

աւանդութեան կը կատարուի Բիւրականի բանակավայրին մէջ: Այս տարի բանակումը տեղի ունեցաւ 17-21 Օգոստոս 2016-ին, մասնակցութեամբ Երեւանի մասնաճիւղէն եւ Արմաւիրի միաւորէն 98 գայլիկներու:

Ամրան տաք օրերը գայլիկներու համար դարձան ուրախութեան, նոր յայտնաբերումներու, խինդ ու ծիծաղի օրեր: Այս տարուան բանակումը, սակայն, ունեցաւ շեշտակի կերպով դաստիարակչական բնոյթ: Գայլիկները բաժնուեցան



տարիքային խումբերու եւ իւրաքանչիւրը ունեցաւ իր յայտագիրը՝ համապատասխան գիտելիքներով, ձեռային աշխատանքներով եւ խաղերով:

Բանակումի աւարտին, անհրաժեշտ գիտելիքներու ստուգումէն ետք, 25 գայլիկներ փոխանցուեցան սկաուտական շարքեր՝ խոստանալով իրենց երթը շարունակել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի շարքերուն մէջ:

Փակման արարողութեան ընթացքին կազմակերպուեցաւ խոստման արարողութիւն. 57 գայլիկ-արծուիկներ խոստացան հաւատարիմ մնալ գայլիկի իրենց խոստումին եւ միշտ առաջնորդուիլ անով:

Տունդարձին բոլորը գոհ եւ ուրախ էին, թէեւ բանակումը շարունակելու ցանկութիւնը շատ աւելի մեծ էր...



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԵՌՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ «ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ» ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

27 -29 Մայիս 2016-ին, Երեւանի «Հայկ Յովսէփեան» բանակավայրին մէջ տեղի ունեցաւ եռօրեայ սեմինար մը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի գրեթէ բոլոր միաւորներէն 29 սկաուտներու, 7

պատասխանատուներու եւ դանիացի 3 սկաուտ պատասխանատուներու:

Սեմինարին ընթացքին, Դանիոյ մէջ վերապատրաստութեան դասընթացքի հետեւած Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի պատասխանատուները նոր մեթոդներով եւ լսողատեսողական արդի միջոցներով սկաուտներուն փոխանցեցին հետաքրքրական գիտելիքներ ու նոր փորձառութիւններ: Կիրարկուեցան նաեւ հաճելի ժամանցի յայտագիրներ:

Սեմինարը նոր շունչ հաղորդեց սկաուտական աշխատանքներուն, որովհետեւ ան յատկանշուեցաւ մատուցման իր նոր ձեւերով: Սեմինարին աւարտին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի կեդրոնական գրասենեակին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը դանիացի պատասխանատուներուն հետ: Հանդիպումին անոնք իրենց տպաւորութիւններն ու արժեւորումները փոխանցեցին կատարուած աշխատանքին մասին:

Հիւրերը Հայաստանէն մեկնեցան իրենց հետ տանելով ջերմ եւ բարի յուշեր:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՍՆԱԾԻԲՈՒՄՆ «ԱՐՑԱԽ» ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի Մեկուսի Շրջանի Վարչութիւն
ՎԻԵՆՆԱ



Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի շրջանը վերաշխուժացման մէջ է: 1990-ին հիմնուած մասնաճիւղին մէջ, այսօր, վարչութեան հովանիին տակ կը գործեն սկաուտական բաժինը, դաստիարակչական, ընկերային, քարոզչական ու կեդրոնի բարեկարգման յանձնախումբերը: Հիմնադրութեան առաջին տարիներուն բանակումներ կազմակերպած մասնաճիւղը վերջին տասնամեակին բանակում չէր իրականացուցած: Այս տարի, երկար ընդմիջումէ ետք, մասնաճիւղին վարչութիւնն ու խմբապետութիւնը որոշեցին կեանքի կոչել տարեկան բանակումներու ականդրութիւնը եւ մասնաճիւղին վերաշխուժացման իբրեւ ապացոյց՝ բանակում եւ ժողովրդային խարուկահանդէս կազմակերպեցին:

Մասնաճիւղին տարեկան բանակումը տեղի ունեցաւ 18-21 Օգոստոս 2016-ին, Աւստրիոյ հիւսիս-արեւելեան Միսթրլպախ ավանին մէջ, մասնակցութեամբ 27 սկաուտներու: Բանակումին անունն էր «Արցախ», իսկ նշանաբանը՝ «Յաղթական», յարգելու համար յիշատակը 2016-ի Ապրիլին Արցախի քառօրեայ պատերազմի զոհերուն:

Բանակումին ընթացքին տեղի ունեցան սկաուտական գիտելիքներու գործնական կիրարկումներ, Արցախի պատմութեան, աշխարհագրութեան, Արցախեան հիմնահարցին նուիրուած դաստիարակչական ծրագիրներ, երգերու եւ կանչերու ուսուցումներ, ձեռային աշխատանքներ, մարզական եւ սկաուտական խաղեր: Երեկոները, խարոյկին շուրջ, սկաուտները ազգային եւ սկաուտական երգերու ու կանչե-



րու կատարումով ընկերային շէնչող մթնոլորտ մը ստեղծեցին:

Բանակումի աւարտին տեղի ունեցաւ պաշտօնական խարուկահանդէս, ներկայութեամբ ծնողներու, համակիրներու եւ միսթրլպախաբնակ հայորդիներու: Բացման պատկերը բաւականին յուզիչ էր: Խարոյկը վառելէն ետք, բանակողները խաւաքարտերով Արցախի դրօշը շինեցին, նոյն միջոցին ժողովուրդը յոտնկայս լսեց Արցախեան քառօրեայ պատերազմին նահատակուած հերոսներուն անունները եւ յարգեց անոնց յիշատակը: Բացման պատկերին յաջորդեցին բացման խօսք, սկաուտական բուրգի կազմութիւն, հայկական պար, զակեշտ, մեներգ, ասմունք եւ շուրջպար: Այս առթիւ տեղի ունեցաւ խոստման արարողութիւն: Մասնաճիւղի եւ բանակումի խմբապետ եղբ. Խաչիկ Մանկիկեան կատարեց մասնաճիւղի խմբապետական կազմի աստիճանատուչութիւն:

Խարուկահանդէսի աւարտին, դրօշակի արարողութեամբ կատարուեցաւ բանակումին պաշտօնական փակումը, ուր վարչութեան սկաուտական ներկայացուցիչ եղբ. Գէորգ Յակոբեան փոխանցեց վարչութեան խօսքը, գնահատելով Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը՝ նոր սերունդներու մարդկային ու հայեցի դաստիարակութեան մէջ, ինչպէս նաեւ բանակումներու անհրաժեշտութիւնը՝ սկաուտներուն առողջ միջավայրի ապահովման եւ հոգեմտաւոր զարգացման համար:

Արցունքոտ աչքերով բանակողները օղակ մը կազմեցին եւ բաժանումի երգը երգելէ ետք, անմոռանալի յիշատակներով վերադարձան իրենց առօրեային:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ 7-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ական ՄՈՆԹՐԷԱԼ

ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանի միջ-մասնաճիւղային 7-րդ բանակումը տեղի ունեցավ 16-24 Յուլիս 2016-ին, Քէպէք նահանգի Տիւբլու շրջանի «Awacamenj Mino» սկաուտական բանակավայրին մէջ, կազմակերպութեամբ ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային Սկաուտական Խորհուրդին:

Միջ-մասնաճիւղային բանակումները Գանատայի մէջ տեղի կ'ունենան քառամեայ հերթականութեամբ: Այս տար-

ւան բանակումին ընդհանուր խմբապետն էր Մոնթրէալի մասնաճիւղի խմբապետ եղբ. Վահէ Շահինեան: Իրեն օգնականներ նշանակուած էին տղոց բաժնի խմբապետ եղբ. Լեոն Սարմազեան եւ աղջկանց բաժնի խմբապետուհի քոյր Ռուբինա Սարգիսեան: Քոյր Ռուպինա խմբապետական կազմին հետ կատարեց նախապատրաստական բոլոր աշխատանքները, սակայն վերջին պահուն, յարգելի պատճառներով բացակայեցաւ բանակումէն: Զինք փոխարինեց քոյր Թինա Եկոյեան:

Այս տարուան միջ-մասնաճիւղային բանակումին թեմա ընտրուած էին «բնութեան 4 տարրերը»՝ ներկայաց-

ւած իրենց գոյներով. հողը՝ սրճագոյն, ջուրը՝ կապոյտ, օդը՝ մոխրագոյն, կրակը՝ կարմիր:

Բանակումին մատակարարումը եւ խոհարարութիւնը վստահուեցաւ ՀՄԸՄ-ի Մոնթրէալի եւ Թորոնթոյի Սկաուտական Խորհուրդներուն, որոնք իրենց օգնականներու խումբով, 9 օր շարունակ, առանց ուշացումի, համեղ նախաճաշեր, ճաշեր եւ ընթրիքներ պատրաստեցին 380 բանակողներու:

Բանակումին առաջին օրը, 6 փոխադրակառքեր եւ 4 բեռնակառքեր հասան բանակավայր: Սկաուտական կազմերուն հետ ներկայ էին նաեւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներ, ատենապետ եղբ. Գառնիկ Նազարէթեան, բանակումի կազմակերպական ընդհանուր պատասխանատու քոյր Հելէն Նաճարեան, հաշուապահ եղբ. Թորոս Մեսրոպեան եւ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Յակոբ Տէր Յովակիմեան:

Պաշտօնական բացումը կատարուեցաւ դրօշակի արարողութեամբ եւ «Ով հայ արի» սկաուտական քայլերգին երգեցողութեամբ: Իննօրեայ բանակումին յայտագիրը ընդգրկեց դաստիարակչական դասախօսութիւններ, ըսկաուտական գիտելիքներու գործնական կիրարկում, խաղեր եւ «բնութեան տարրեր»ուն ընտելանալու գործնական ու հաճելի միջոցներ: Առողջարար օդը ամէնօրեայ ներկայութիւն էր, իսկ շեշ-



տը դնելու համար ջուրին վրայ, կազմակերպուած էր «Ջուրի օր», ուր բոլոր բանակողները, լճափին զուարճացան լողալով, մակոյկներ թիավարելով, սուզուելով եւ ջուրի զանազան խաղեր ընելով, խմբապետներու թելադրութիւններուն եւ հսկողութեան ներքեւ:

Խմբապետական կազմը կազմակերպած էր միօրեայ արշաւ մը բնութեան մէջ, շեշտը դնելով հողին եւ անոր մեզի մատուցած բարիքներուն, բոյսերուն եւ ծառերուն վրայ:

Երեկոները, բանակումներու ամէնէն սիրելի եւ հաճելի բաժինը խարուկահանդէսն էր, կրակը: Հոս ալ, խմբապետները բանակողներուն ցոյց տուին կրակին առաւելութիւնները՝ մարդկութեան կեանքի սկիզբէն մինչեւ մեր օրերը, անշուշտ միշտ յորդորելով հեռու մնալ հրդեհներու վտանգէն:

Բանակումին նախափերջին օրը բանակավայր այցելեցին եւ խարուկահանդէսին ներկայ գտնուեցան հիւրեր եւ ծնողներ: Հիւրերու շարքին էին Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Արմէն Եկանեան, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թոփուզեան, Scout Montreal Metropolitain-ի ներկայացուցիչներ, Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներ, շուրջ 400 ծնողներ ու Հ.Մ.Ը.Մ-ականներ:



Այս առիթով խօսքեր արտասանեցին դեսպան Եկանեան, Առաջնորդ Բաբգէն Արք., Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչները, որոնք բարձր գնահատեցին Գանատայի հեռաւոր ափերուն Հայաստան մը ստեղծած եւ այսքան մեծ թիւով հայ պատանիներ ու պարմանուհիներ իրարու քով հաւաքած Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին ազգանուէր աշխատանքը:

Վերջին օրը, բանակողներուն բաժանումը եղաւ բաւական դժուար: Վրանները քակելէ, հաւաքելէ եւ բանակավայրը մաքրելէ ետք, բոլորը իրարու ողջերթ մաղթեցին լացով ու ծիծաղով, դարձեալ իրարու հանդիպելու տրամադրութեամբ, ապա «Ցտեսութիւն» երգով անոնք հրաժեշտ տուին իրարու՝ դարձեալ հանդիպելու խոստումով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱՎԱԼԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԻՆ ԵՐԿՕՐԵԱՅ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Սարգիս Գալուրժեան
ԼԱԽԱԼ

ՀՄԸՄ-ի Լավալի մասնաճիւղին տարեկան դաշտահանդէսը 27 եւ 28 Օգոստոս 2016-ին տեղի ունեցաւ տեղւոյն Հայ Կեդրոնի շրջափակին մէջ:

Ծանօթ է, որ դաշտահանդէսին եկամուտը ամբողջութեամբ կ'օգտագործուի մարզիկներու կարիքներու ապահովման համար: Այս իսկ պատճառով, մասնաճիւղին մարզական յաջողութեան նպաստելու համար, գաղութին անդամները հոծ թիւով ներկայ եղան երկօրեայ այս ձեռնարկին: Մինչեւ ուշ երեկոյ, անոնք վայելեցին Հայ Կեդրոնին կանաչապատ շրջափակին մաքուր օդը եւ հայկական հաճելի երաժշտութիւնը:

Մասնաճիւղի վարչութեան եւ ընկերային յանձնախումբի քրտնաջան աշխատանքին ու հաճելի սպասարկութեան շնորհիւ դաշտահանդէսը պսակուեցաւ յաջողութեամբ:

Մասնաճիւղին ֆուտպոլի տեւաբար մեծցող խումբը կազմեց 2 ենթախումբեր, որոնք դաշտահանդէսի ընթացքին իրարու հետ խաղացին ընկերային ցուցադրական խաղեր:

Ճատրակի մրցաշարքին իրենց մասնակցութիւն բերին նաեւ Թէքէեան Մշակութային Միութեան ճատրակի խումբին 4 պատանիները:

Հաւասար մրցակիցներ ունենալու համար, մասնակիցները ըստ տարիքի բաժնուած էին 3 խումբի՝ 7-9, 10-12 եւ 13-15 տարեկաններ: Երեք խումբերուն համար ալ նախատեսուած էին երեքական մետալ՝ ոսկի, արծաթ եւ պրոնզ:

Բոլոր մարզիկներուն առիթը տրուեցաւ իրարու հետ խաղալ 2 անգամ՝ մէկական ճերմակ եւ սեւ խաղաքարերով: Մետալներու տիրանալու համար, հաւասար կէտ ապահոված մարզիկները իրարու հետ պէտք է խաղային յաւելեալ երկու խաղ, նոյն սկզբունքով: Դարձեալ հաւասարութեան պարագային, մարզիկները պէտք է խաղային 10 վայրկեաննոց խաղ՝ ժամացոյցով: Յաղթողը կը ստանար մետալը:

Այսպէս, 7-9 տարեկաններու մրցումին մասնակցեցան Արէն Կարապետեան, Արէն Լեփէճեան, Գրիգորի Բամոկ-



եան, Կարէն Կարամանլեան (ԹՄՄ), Մհեր Կարապետեան, Սարգիս Պազգալեան (ԹՄՄ), Սարին Տօնիկեան, Վիլյէթ Բամոկեան եւ Քրիստ Փիլաւճեան:

Առաջնութեան տիրացաւ եւ ոսկի մետալին արժանացաւ Քրիստ Փիլաւճեան: Երկրորդ դիրքը գրաւեց Կարէն Կարամանլեան, իսկ պրոնզէ մետալին տիրացաւ Մհեր Կարապետեան: Այս խումբին մէջ կային խոստմնալից երկու աղջիկներ՝ Սարին Տօնիկեան եւ Վիլյէթ Բամոկեան, որոնք եթէ յարատեւ մասնակցին ճատրակի դասերուն շատ շուտով կը հասնին լաւ արդիւնքներու:

10-12 տարեկաններու մրցումին մասնակցեցան Արամ Պետրոսեան, Սեւակ Բաբախեան եւ Սերժ Սոմոնճեան:

Այս խումբին մէջ, ոսկի մետալին համար մղուեցաւ սուր պայքար՝ Արամ Պետրոսեանի եւ Սերժ Սոմոնճեանի միջեւ: Ի վերջոյ, առաջնութեան տիրացաւ Սերժ Սոմոնճեան: Արամ Պետրոսեան ստացաւ արծաթէ մետալ, իսկ Սեւակ Բաբախեան՝ պրոնզէ մետալ:

13-15 տարեկաններու բաժնին մէջ, մրցակիցները թիւով չորս էին. Յարութ Գանձանակեան (ԹՄՄ), Նժդէհ Գարապալեան (ԹՄՄ), Պողոս Պողոսեան եւ Սեւակ Աֆարեան: Սեւակ Աֆարեան բոլոր մրցումները առանց պարտութեան աւարտելով տիրացաւ առաջնութեան: Նժդէհ Գարապալեան գրաւեց երկրորդ դիրքը, իսկ պրոնզէ մետալին տիրացաւ լիբանանահայ Պողոս Պողոսեանը, որ հիւրաբար կը գտնուէր Մոնթրէալ:

Մրցաշարքի կազմակերպիչներն էին ՀՄԸՄ-ի Լավալի ճատրակի խումբի պատասխանատուներ եղբ. Սարգիս Գալուրճեանը եւ եղբ. Յովհաննէս Կեջակուչեանը, որոնց միացաւ ԹՄՄ-ի ճատրակի խումբի պատասխանատու Երուանդ Տէմիրճեանը:



ՄՈՆԹՐԷԱԼԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄՔԵՐԸ ԳՈՆԳՈՐՏԻԱ ԼԻԿԻ ԱԽՈՅԵԱՆ

Թղթակից
ՄՈՆԹՐԷԱԼ

Մենթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի ֆուտպոլի խումբերը, անցնող եղանակին, Քէպէքի «Գոնգորտիա լիկ»ի մրցաշարքերուն արձանագրեցին զնահատելի արդիւնքներ՝ հետեւեալ պատկերով.-

- 18 տարեկան դասակարգի տղոց խումբը նուաճեց ախոյեանութեան տիտղոսը եւ տիրացաւ նախագահի բաժակին:

- 14 տարեկան դասակարգի աղջկանց խումբը եւս տիրացաւ ախոյեանութեան տիտղոսին՝ արժանանալով նախագահի բաժակին:

- Երէց աղջկանց խումբը Լաւալի «Թոթալ Գամփո»յի աւարտականին յաղթանակ արձանագրելով տիրացաւ ախոյեանութեան:

- Իսկ 12 տարեկան դասակարգի աղջրկանց խումբը ամառնային եղանակի մրցաշարքերուն առաջնութիւնը շահելով մասնակցեցաւ «Գոնգորտիա լիկ»ի աւարտականին:

Նշենք, որ տղոց խումբին աւարտական մրցումէն շաբաթ մը առաջ խումբը արդէն տիրացաւ տիտղոսին, երբ 1-0 արդիւնքով յաղթեց մրցակիցին, սակայն իրաւարարին մէկ սխալ որոշումին պատճառով պահանջուեցաւ մրցումը կրկնել: Մրցումը կրկնուեցաւ եւ

Հ.Մ.Ը.Մ. կարողացաւ դարձեալ յաղթել, այս անգամ 3-1 արդիւնքով: Աւարտականի բոլոր խաղերուն ներկայ գտնուեցաւ հոծ բազմութիւն մը մարզասէրներու, մարզիկներու, ծնողներու, հայ թէ օտար համակիրներու, որոնք անընդհատ քաջալերեցին խումբը:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԹՈՐՈՆԹՈՅԻ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ «ԲԱՐՉՐԱՑԻՐ-ԲԱՐՉՐԱՑՈՒՐ»ԻՆ ՀԵՏ ՅԻՇԵՑԻՆ ՈՒ ՊԱՀԱՆՁԵՑԻՆ

Լոռի Գազանձեան ԹՈՐՈՆԹՕ

Միութենական կեանքի մէջ ձեռնարկներ կան, որոնք երբեք չեն մոռցուիր: Ձեռնարկներ կան, որոնք հետք կը ձգեն եւ սերունդներու յիշողութեան մէջ կը մնան: Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի անցնող տարեշրջանի երկու մեծ ձեռնարկները կ'իյնան այդ ծիրին մէջ եւ, առ այդ, արժանի են յիշուելու՝ թէկուզ որոշ ուշացումով: Ձեռնարկներ, որոնք կ'արտայայտեն հայ սկաուտին յանձնառութիւնը՝ հանդէպ իր ժողովուրդին, հայրենիքին ու Հայ Դատին:

Արդարեւ, մենք ոչ միայն սկաուտներ ենք, այլեւ՝ հայ, Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտներ ենք: Ամէն շաբաթ մեր աշխատանքները կ'ամբողջացնենք ո՛չ միայն սկաուտական դաստիարակութիւն ստանալով, այլեւ՝ հայ ոգին առողջ ու ամուր պահելով մեր հոգինե-



րուն մէջ: Կը սորվինք մեր պատմութիւնը, կը պահպանենք մեր լեզուն ու մշակոյթը: Կը յիշենք Հայոց Յեղասպանութիւնը եւ մեր նախահայրերուն պայքարն ու զոհողութիւնը: Մեր խմբապետներուն առաջնորդութեամբ

կ'անդրադառնանք Հայ Դատի կարեւորութեան, Հայաստանի ու Արցախի ներկայ իրավիճակին, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներու դերին՝ հայապահպանման աշխատանքներու մէջ: Մեր արդար դատին հատուցումը կը պահանջենք ո՛չ միայն թուրքերէն, այլեւ՝ համայն աշխարհէն: Այս առիթով, մեր սկաուտական երկու գլխաւոր ձեռնարկներն ու աշխատանքները նուիրեցինք Հայոց Յեղասպանութեան յիշատակին:

«ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»Ը

Աւանդութիւն դարձած մեր «Հայ Սկաուտի Օր»ը տեղի ունեցաւ մեծ շուքով: Երէց փաղանգի եղբայրները կազմեցին «Ծիծեռնակաբերդ»ի ձեռակերտը, զոր գետեղեցին Թորոնթոյի Հայ կեդրոնի սրահին մուտքին, իսկ Արի խումբի եղբայրները կազմեցին Եռագոյն դրօշին ձողը: Արեւոյշ եւ Պարմանուհի քոյրերը պատրաստեցին բազմաթիւ ձեռագիր աշխատանքներ՝ անմո-



ուսուցիչ, վերածընունդի եւ յաւերժութեան նշանի թեմաներով:

Սրահը լեցուն էր հոծ բազմութեամբ: Ներկայ էին հոգեւոր հայրեր, ներկայացուցիչներ եւ ծնողներ: Օրուան հան-



դիսավարներն էին քոյր Արագ Տէր Օհան՝ պարմանուհի փաղանգէն եւ եղբ. Մասիս Աւետիսեան՝ երէց փաղանգէն: Քայլերգով բոլոր խումբերը իրենց աստիճանաւորական կազմով մուտք գործեցին սրահ: Դրօշակի արարողութեան աւարտին, ներկաները յոտնկայս յիշեցին մեր մէկուկէս միլիոն սուրբերը: Հանդէս եկան մեր մոկլիները՝ իրենց հայրենասիրական երգերով: Իւրաքանչիւր արծուիկ երամ եւ գայլիկ վոհմակ ներկայացուց փունջ մը արտասանութիւններ: Արեւոյշ խումբը մեծ աշխատանք տարած էր գաւազաններով տողանցքի պատրաստութեան համար: Արիներու խումբը յեղափոխական երգերով յուզիչ մթնոլորտ մը ստեղծեց: Պարմանուհի փաղանգին քոյրերը ներկայացուցին իրենց յօրինած համաչափ տողանցքը: Երէց փաղանգը պատրաստած էր յատուկ յայտագիր մը: Անոնք իրենց մարմնի շուքերով ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.ի եւ Յեղասպանութեան պատմութիւնը:

Այս առիթով, մասնաճիւղին վարչութիւնը յարմար գտաւ պարգեւատրել Արմէնուհի Գոլոյեանը՝ երկար տարիներ մասնաճիւղին ցուցաբերած իր բարոյական եւ նիւթական աջակցութեան համար: Սկաուտներ, իրենց կարգին, քրոջ նուիրեցին Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղին սկաուտական փողկապը:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հայոց Յեղասպանութեան յիշատակին նուիրուեցաւ նաեւ մասնաճիւղին տարեկան բանակումը, որուն մասնակցեցան շուրջ 120 քոյրեր եւ եղբայրներ: Բանակումը սկսաւ տպաւորիչ եւ յուզիչ կերպով, երբ եղբայրները դրօշակի ձողը կանգնեցուցին անմոռուկի ձեւով: Իւրաքանչիւր դրօշակի արարողութեան,

բանակողները յիշեցին Հայոց Յեղասպանութիւնն ու մեր պահանջատիրութիւնը: Բանակումին ընթացքին տեղի ունեցաւ հայերէն լեզուի բառախաղ: Բառախաղին նպատակն էր պահպանել հայ

լեզուն եւ զօրացնել հայերէնի մեր բառապաշարը: Բանակումին մասնակցողները կատարեցին նաեւ սկաուտական ընդհանուր ռալի մը:

Ծնողները հրաւիրուած էին բանակումի այցելութեան, դրօշակի պաշտօ-

նական արարողութեան եւ խանդավառ խարուկահանդէսի:

Այս առիթը շնորհակալութիւններ պէտք է յայտնել մասնաճիւղի խմբապետ-խմբապետուհիներուն, որոնք ոչ մէկ ճիգ խնայեցին յաջողութեամբ իրագործելու համար այս անմոռանալի բանակումը: Շնորհակալութիւն նաեւ մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի եւ վարչութեան բոլոր անդամներուն՝ իրենց նուիրումին եւ օժանդակութեան համար:

Հայ ծնած ենք, հայ կը մնանք եւ հայ պիտի մեռնինք: «Բարձրացիր՝ բարձրացուր»ին հետ միասին, կը յիշենք եւ կը պահանջենք:

HOME SERVICE

يمكنكم الآن إنجاز جميع خدمات لیبان بوست من بيتكم أو مكتبكم !



1577



libanpost.com
HOME SERVICE



ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ 2016



Արեւելեան Մ. Նահանգներ



Արեւմտեան Մ. Նահանգներ



Յունաստան



Գանատա



Փարիզ



ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ 2016



Պուլկարիա



Ստաերթելիա, Շուկո



Աթոքիլմ, Շուկո



Հիլանտա



Վիեննա



Վիեննա



Այնճար



Այնճար



Այնճար



Այնճար



Պէյրուք



Պուրժ Համուտ



Անթիլիա



Փրսեյտ



Ռամուտա



Հ.Ա.Ս.Կ. Գայլիկներ



Պուլեճու Այրես



Կիպրոս



Գորտոպա



Միւնիխ



Մոնթեվիստո



Հալեպ



Լաթաքիա



Գահիրե



Դամասկոս



Երուսաղեմ



ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿ ՄԻԱՖՈՐՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ «ՄՈԿԼԻԻ ՕՐ»ՈՒՄՆ ՆՇՈՒՄ ՀԱՒԴԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.ի Հայկաի Մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդ
ՀԱԼԷՊ

Տարիներու աւանդութիւն դարձած է կիսօրեայ կամ միօրեայ գործունէութիւններով «Հայ Սկաուտի Օր»ուան նշումը սկաուտներու կողմէ, իսկ «Մոկլիի Օր»ուան յիշատակումը՝ գայլիկ-արծուիկներու կողմէ:

Այս տարի, Հ.Մ.Ը.Մ.ի Հայկաի մասնաճիւղի «Շաւարշ Քրիսեան» եւ «Գրիգոր Յակոբեան» գայլիկ-արծուիկ միաւորները «Մոկլիի Օր»ը յիշատակեցին կիսօրեայ գործունէութեամբ մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 26 Յունիս 2016-ին, Ազգ. Կիւլպէնկեան վարժարանին մէջ:

Առաւօտեան ժամը 9-ին, գործունէութեան բացումը կատարուեցաւ գայլիկական «Մեծ Կանչ»ով, որմէ ետք «Կարմիր», «Կապոյտ» եւ «Նարնջագոյն» վոհմակ-երամները մեկ-

նեցան՝ իրենց յայտագիրը շարունակելու համար Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզին մէջ: Յայտագիրը սկիզբ առաւ խմբակային դրութեամբ, ուր իւրաքանչիւր խումբի անուն ճշդուեցաւ մոկլիի բարեկամներուն եւ ընկերներուն անուններով (Պալու, Աքելլա, Քաա, Ռաքա, Շերխան, Թապաքի, Պանտալոկ եւ այլն): Նախաճաշէն ետք, գայլիկ-արծուիկները ունկնդրեցին մոկլիին պատմութիւնը, մինչ պատասխանատու կազմը պատրաստեց դաշտային խաղեր:

Իրենց կարգին, «Դեղին» վոհմակի քոյրերն ու եղբայրները «Սիմոն Վրացեան» կեդրոնի «Լ. Մասմանաճեան» սրահ երթալով դիտեցին մոկլիին տեսերիզը:

Խաղերուն յաջորդեց կանչերով եւ յեղափոխական երգերով խրախճանքը: Այս առթիւ քոյրերն ու եղբայրները երգեցին ու պարեցին օձի պարը, որմով վերջ գտաւ «Մոկլիի Օր»ուան նուիրուած կիսօրեայ գործունէութիւնը:



Թղթակից
ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.ի Հայկաի մասնաճիւղի գայլիկ-արծուիկ միաւորները Շաբաթ, 30 Յունիս 2016-ին, «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Քրիսեան» սրահին մէջ կատարե-

ներու: Գործունէութիւնը նուիրուեցաւ Լիզպոնի հինգ տղոց յիշատակին եւ ընդգրկեց Լիզպոնի հերոսական գործողութիւնը ծանօթացնող դասախօսութիւն, հերոսները անմահացնող երգի ու սուցում, ձեռային աշխատանք եւ մարզանք:

Առաւօտուն տեղի ունեցաւ քայլար-

ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ՀԱՒԴԻ ՄԷՋ

ցին գիշերային գործունէութիւն, մասնակցութեամբ 50 քոյր-եղբայր-

շաւ դէպի Ս. Աստուածածին եկեղեցի, ուր գայլիկ-արծուիկները մոմավառութիւն կատարեցին՝ ի յիշատակ Լիզպոնի հինգ հերոսներու հոգիներուն, ապա քոյր-եղբայրները իրենց պատրաստած պատի թերթը զետեղեցին եկեղեցույ բակին մէջ:

Հայկաի մասնաճիւղի արի-արեւոյճ եւ երէց-պարման միաւորները, իրենց կարգին, Կիրակի, 31 Յունիս 2016-ին, Ճորճ Սալէմ վանքին մէջ, կիսօրեայ

գործունէութեամբ մը նշեցին Լիզպոնի տղոց յիշատակը: Լիզպոնի գործունէութեան նուիրուած յայտագիրի մը ընդմէջէն անոնք ստացան դասախօսութիւն, կատարեցին երգի ուսուցում եւ հարց-պատասխանի մրցում: Այնուհետեւ, անոնք ուղղուեցան Ս. Աստուածա-

ծին եկեղեցի, ուր մոմավառութեամբ յարգեցին Լիզպոնի տղոց յիշատակը:

... ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՇՏԵՐՈՒ ԿԻՍՕՐԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՆՆԻԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ Իրենց ընթացիկ աշխատանքներու

կողքին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի գայլիկ-արծուիկ միաւորներու «Կարմիր» եւ «Կապոյտ» վոհմակ-երամները իրենց աշխոյժ մասնակցութիւնը բերին Հալէպի պետական վաշտերու խորհուրդին կազմակերպած կիսօրեայ գործունէութեան:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻՂԷՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ՝ 115 ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի Մասնաճիւղի Սկառուտ. խորհուրդը ՀԱԼԷՊ

11 Սեպտեմբեր 2016-ը անմուռանալի թուական մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի սկառուտ քոյրերուն եւ եղբայրներուն համար, որոնք քանի մը տարի բանակումներու մասնակցութենէ զրկուելէ ետք, ի վերջոյ կարողացան ռումբերու տարափներէն հեռու, Քեսապի մէջ բանակում կատարել, քիչ մը հանգչիլ,

կազդուրուիլ եւ նոր եռանդով միութենական կեանքի լծուիլ:

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի Սկառուտ. խորհուրդին կազմակերպութեամբ, բանակումը տեղի ունեցաւ Քեսապի համալիրին մէջ, մասնակցութեամբ 115 քոյր-եղբայրներու, որոնք եօթը խումբերու բաժնուելով՝ կրեցին «Յակոբ Ճոլոլեան», «Լեւոն Յակոբեան», «Վահան Չերազ», «Գրիգոր Մերձանոֆ», «Հայկ Ճիզմէճեան», «Տիգրան Խոյեան» եւ «Եզնիկ Քաջունի» անունները: Բանակումի պատասխանատուն էր եղբ. Յակոբ Ուրիշիկեան:



Բանակումը կրեց միութեան նշանաբանը մտայղացող Պետրոս Ատրուների անունը: Եօթը օրուան ընթացքին, մասնակիցները ստացան դասախօսութիւններ, ընդհանուր գիտելիքներ, սորվեցան Հ.Մ.Ը.Մ.ական ու ազգային երգեր, կատարեցին թելեմաչի ու ռալիի

ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԷՆՆԻԹԻՒՆ

Թղթակից ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի «Լեւոն Աբգարեան» արի-արեւոյշ միաւորը կազմակերպեց գիշերային գործունէութիւն մը, նուիրուած՝ Պանք Օթոմանի գրաւման 120-ամեակին:

Այս առթիւ, սկառուտներ հաւաքուեցան «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Քրիսեան» սրահը, ուր տեղի ունեցաւ դասախօսութիւն, զրոյց, հարց-պատասխանի մրցում, երգի ուսուցում եւ պատի թերթի պատրաստութիւն: Առաւօտուն, մասնակից քոյրերն ու եղբայրները մեկնեցան Ս. Աստուածածին եկեղեցի եւ եկեղեցւոյ շրջափակին մէջ զետեղեցին Պանք Օթոմանի գրաւման նուիրուած պատի թերթը: Անոնք կատարեցին նաեւ մոմավառութիւն՝ ի յիշատակ հայ ժողովուրդի հին թէ նոր նահատակներու:

Ղաշտային խաղեր, հարց-պատասխանի մրցումներ եւ պատի թերթի աշխատանք, որուն նիւթերն էին՝ Խանասորի արչաւանքը, Պանք Օթոմանը, Լիզպոնի գործողութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնը, Մայիս 28-ը եւ սկառուտական:

Օրուան զանազան ժամերուն բանակողներուն ընկերակցեցաւ «Սկառուտին ձայնը» ռատիոժամը, որ հետաքրքրա-



կան յայտագիրներով ծաղկեցուց բանակավայրին միջնուրտը: Իւրայատուկ եւ յատկանշական էր բանակումին հաւաքական ճաշը, երբ քոյրերն ու եղբայրները համախմբուած կը ճաշէին: Սկաուտները անցնող հինգ տարիներուն իրենց

սորված տեսական եւ դասարանային գիտելիքները կատարեցին գործնական աշխատանքներով: Անոնք արշաւեցին Քեսապի զանազան վայրեր՝ Ս. Աստուածածին եկեղեցի, Գալատուրան, Հ.Մ.Ը.Մ-ի ակումբ եւ էսկիւրան, ուր քեսապցի բանակողներէն մէկը հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց Քեսապի աւանդութիւններուն եւ սովորութիւններուն մասին: Սկաուտները զրուցեցին նաեւ քեսապցիներու հետ մնայուն կապի պահպանման մասին:

Օրը կը սկսէր աշխոյժ մարզանքով եւ հետաքրքրական յայտագիրէ ետք՝ գիշերուան մշուշը իր հետ կը տարածէր սկաուտական երգերու եւ կանչերու արձագանքը: Բոլորը խարոյկին շուրջ հաւաքուած՝ ճոխ միջնուրտ մը կը ըստեղծէին:



Տեղին է յիշել, որ Հ.Մ.Ը.Մ-ի Քեսապի մասնաճիւղին սկաուտ քոյրերն ու եղբայրները մասնակից դարձան բանակումին մտերմիկ խրախճանքներուն եւ աւանդական խարոյկին:

Բանակումին յաջողութեան մէջ մեծ դեր ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղին վարչութիւնը:

Լիայոյս ենք, որ յաջորդ բանակումը կը կատարուի Հ.Մ.Ը.Մ-ի բանակավայրէն ներս:

Հ.Մ.Ը.Մ-Ի ՃԱՏՐԱԿԻ ՄԱՐԶԻՉՆԵՐՈՒ ԴԱՍԸՆԹԱՅՔԻ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՌՂՈՒԹԻՒՆ

Թղթակից
ՀԱԼԷՊ

9 Սեպտեմբեր 2016-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ՍԵՎԱՄ-ի՝ Սուրիոյ Երկսեռ Վարժարաններու Աշակերտական Մարզախաղերու յանձնախումբին ճատրակի մարզիչներու դասընթացքին վերջին հանդիպումը:

Դասընթացքի մարզիչներ՝ Կարպիս Թոփճեան եւ եղբ. Սեպուհ Քէչէճեան միամսեայ դասընթացքին ծրագիրը ամփոփելով, իրենց եզրափակիչ թելադրանքները փոխանցեցին մասնակիցներուն:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան խօսք առնելով գնահատեց ՍԵՎԱՄ-ի յանձնախումբին աշխատանքը, որ խօսքը գործի վերածելով յաջողցուց դասընթացքը: Ապա, ան յաջողութիւն մաղթեց դասընթացքի մասնակիցներուն, շեշտելով որ անոնք յարատեւ աշխատանքով պիտի ըլլան հայէպահայութեան ճատրակի առաջին դպրոցին մարզիչները եւ մօտ ապագային պիտի մարզեն նոր սերունդը:

Դասընթացքին աւարտին տեղի ունեցաւ հաստատագիրներու բաշխում՝ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեանի եւ ՍԵՎԱՄ-ի յանձնախումբի ատենապետ եղբ. Եղիա Քիլէճեանի ձեռամբ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ Ա. ԿԱՐԳԻ ԵՌՕՐԵԱՅ ՄԵՄԻՆԱՐԸ

Թղթակից
ԼԱԹԱՔԻԱ

ՀՄԸՄԻ Լաթաքիոյ մասնաճիւղին խմբապետութիւնը Ա. կարգի դաստիարակչական եռօրեայ սեմինար մը կազմակերպեց շրջանի ակումբին մէջ: Սեմինարին իրենց մասնակցութիւնը բերին Վարիչ Առաջնորդ եւ Փոխ Խմբապետ աստիճանները կրող քոյրերն ու եղբայրները, ներկայութեամբ՝ մասնաճիւղի Խմբապետին եւ Աքելային: Մասնակիցներուն ընդհանուր թիւն էր՝ 14 քոյր-եղբայրներ:

Սեմինարը ընդգրկեց կրօնական, միութենական, սկստակական եւ կազմակերպչական նիւթերով դասախօսութիւններ:

- «Ի՞նչպէս տեղեկագիր գրել»:
- «Գիտնալ դիւանական աշխատանքի եղանակը»:
- «Աստիճանաւորական ժողովի հանգամանքը, կարեւորութիւնն ու պարտականութիւնը», դասախօս՝ քոյր Վարդուկ Թուլումճեան:
- «Սկստակական ոգին»:
- «Խմբակային դրութիւն», դասախօս՝ եղբ. Պետրոս Գաբթանեան:
- «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հինգ տաղաւարները», դասախօս՝ Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեան:
- «Աստիճանաւորին յարաբերու-

թիւնը բարձր մարմիններուն հետ», դասախօս՝ եղբ. Բաֆֆի Գոչեան:

- «Երեխաներ, հարցեր եւ լուծումներ»:

- «Մանկավարժութիւն», դասախօս՝ եղբ. Բաֆֆի Նազարեան:

Վերոյիշեալ նիւթերու կողքին, սեմինարին մասնակից քոյր-եղբայրները կատարեցին նաեւ զրոյց մը՝ «Ազգ եւ հայրենիք» նիւթով: Զրոյցը վարեց քոյր Մեղրիկ Մանճեան:

Սեմինարը չէր ամբողջանար առանց գործնական աշխատանքի, հետեւաբար, երեք օրուան ընթացքին քոյրերն ու եղբայրները կատարեցին գործնական հետեւեալ աշխատանքները:-

- Կարգապահական օրէնքներու կիրարկում, հսկողութեամբ՝ եղբ. Սազո Քէչէճեանի:



ՎԵՀԱՓԱՌԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Թղթակից
ԼԱԹԱՔԻԱ

ՀՄԸՄԻ Լաթաքիոյ մասնաճիւղին սկստակները բախտաւորուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառին հովուապետական այցելութեամբ:

Արդարեւ, Արամ Ա. Վեհափառ Սուրբիոյ ծովեզերեան շրջանները այցելեց, ընկերակցութեամբ Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի: Սկսելով Լաթաքիայէն, Յինգշաբթի, 28 Յուլիսի կեսօրուան ժամը 12.30-ին, Վեհափառը այցելեց Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցին եւ եկեղեցւոյ «Արարատ» սրահին մէջ Յովուապետական իր օրհնութիւնն ու մաղթանքները փոխանցեց մեր ժողովուրդին:

Այս առիթով, ՀՄԸՄԻ Լաթաքիոյ մասնաճիւղին գայլիկարծուիկները եւ արի-արեւոյշները իրենց վստահուած ըսկատական պարտականութիւնը կատարեցին ամենայն բծախնդրութեամբ:



- Սկսած սկսական կապեր, հանգույցներ, փաթեթակառուցումներ եւ հիւսքեր, հսկողութեամբ՝ եղբ. Կարո Գալստյանի:

- Սկսած սկսական կայմի եւ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած պատի թերթի պատրաստութիւն:

... ԵՒ ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ

Լաթաքիոյ մասնաճիւղին գայլիկ-

արծուիկները, իրենց կարգին, կատարեցին դաստիարակչական միօրեայ սեմինար մը, որուն յայտագիրը ընդգրկեց գայլիկական զանազան գիտելիքներ, երգեր, կանչեր եւ ձեռնարկներ: Գայլիկները ծանօթացան մոկլի պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան, սորվեցան գայլիկական կապերը, սուրիչները, հետախուզական նշաններն ու կարգապահական



օրէնքները:

Այս ճոխ յայտագրի ուսուցումէն ետք, գայլիկ-արծուիկները նոր գիտելիքներով զինուած, բարձր տրամադրութեամբ վերադարձան տուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՍՆԱԾԻԻՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Ազնի Պետրոսեան
ԼԱԹԱՔԻԱ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լաթաքիոյ մասնաճիւղին տարեկան բանակումը տեղի ունեցաւ 25-28 Օգոստոս 2016-ին, Քեսապի «Ինճէճիկեան» կեդրոնին մէջ: Բանակումին պատասխանատուն էր մասնաճիւղի խմբապետ՝ եղբ. Սաբո Քէչէճեան: Բանակումին մասնակցեցան սկսողները, գայլիկները եւ մասնաճիւղին աստիճանաւորական կազմէն ութ քոյրեր եւ եղբայրներ:

Տարիներու սպասումէ ետք, սկսողներն ու գայլիկները մեծ եռանդով ու խանդով մասնակցեցան այս բանակումին, որուն յայտագիրը եղաւ բաւական հարուստ: Մասնակիցները ազգային, գիտական եւ սկսողական նիւթերու կողքին, չորս օրուան ընթացքին առիթը ունեցան զարգացնելու նաեւ իրենց ֆիզիքական կարողութիւնները:

Բանակումին ընթացքին քոյրերն ու եղբայրները միշտ պատրաստ էին կատարելու իրենց լաւագոյնը՝ բանակումին յաջողութիւնը ապահովելու համար:

Տարեկան բանակումին առաջին օրը բանակողները տեղաւորուեցան իրենց վայրերուն մէջ եւ վերջիչեցին կարգապահական որոշ վարժութիւններ եւ գայլիկական գիտելիքներ: Օրը իր աւարտին հասաւ խրախճանքի ճոխ մթնոլորտով:

Երկրորդ օրը բանակողները այցելեցին էսկիւրանի Ս. Աստուածածին եկեղեցին, ուր քոյր Մեղրիկ Ապահունի իրագործեց դաստիարակչական յայտագիր մը՝ արեւելեան ու արեւմտեան Հայաստանի եւ հայկական պատմական թագաւորութիւններու մասին, որմէ ետք ազգային երգերն ու խանդավառ կանչերը գրաւեցին բոլորին ուշադրութիւնը: Երեկոյեան, լուսնի լոյսին տակ եւ կրակարանի շուրջ տեղի ունեցաւ խրախճանք:

Բանակումին երրորդ օրը բանակողները այցելեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Քեսապի մասնաճիւղին ակումբը, ուր քոյր Ճիմի Քուրքեան սկսողներուն հետ զրուցեց ծնողք-զաւակ յարաբերութեան մասին, մինչ գայլիկ-արծուիկները կատարեցին հետաքրքրական խաղեր: Օրուան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.Ի Քեսապի մասնաճիւղի քոյրերուն եւ եղբայրներուն ներկայութեամբ տեղի ունեցաւ խրախճանք՝ խանդավառ կանչերով եւ ազգային երգերով:

Չորրորդ օրը սկսողները ուղղուեցան Գալատուրանի Ս. Աստուածածին եկեղեցին, ուր մասնակցեցան կիրակնօրեայ Պատարագին, Ս. Աննային նուիրուած տօնակատարութեան եւ ստացան հաղորդութիւն:

Օրուան աւարտին, գայլիկներն ու սկսողները ուրախ տրամադրութեամբ եւ վերանորոգ թափով վերադարձան իրենց տունները:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՉՈՐՍՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ԴԱՄԱՍԿՈՍ

Հինգ տարի անհամբեր սպասել է տք, Սեպտեմբերին, Հ.Մ.Ը.Մ.Ի Դամասկոսի մասնաճիղին արի-արենոյչները կատարեցին իրենց տարեկան բանակումը, մասնակցութեամբ 59 քոյր-եղբայրներով: Բանակումին ներկայ գտնուեցան մասնաճիղի Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Միհրան Ղազարեան եւ եղբ. Անդրանիկ Խաճարեան:

Բանակումը կոչուեցաւ «Արցախ» եւ տեղի ունեցաւ Սեյտնայայի Մար Մանսուր կեդրոնին մէջ, 11-14 Սեպտեմբեր 2016:

Բանակումը ունեցաւ դաստիարակչական հարուստ յայտագիր: Այսպէս, քոյր Դալար Յովսէփեան բացատրեց սկաուտական կարգերն ու աստիճանները, եղբ. Րաֆֆի Պէքէրէճեան դասախօսեց Արցախի մասին, քոյր Գարին Պետիրեան ներկայացուց հետախուզական նշաններու իմաստը, իսկ Սեյտնայայի կեդրոնի պատասխանատու մայրապետը ներկա-

յացուց Մար Մանսուր Տի Փօլի կենսագրականը: Դամասկոսէն ժամանած եղբ. Սարգիս Քիւրտեան դասախօսեց Հ.Մ.Ը.Մ.Ի կառոյցին մասին, իսկ քոյր Սերլի Պուրուհուսուզեան ներկայացուց ողիմպիական խաղերու մասին նիւթ մը:

Բանակումին յայտագիրը ընդգրկեց նաեւ մարզանք, երգի ուսուցում, ռալի մրցումներ եւ թելեմաչ:

Յատկանշական էին բանակումին խարուկահանդէսները, որոնք խանդավառ մթնոլորտ ստեղծեցին երգերով, պարերով ու զաւեշտներով:

Բանակողները այցելեցին ծերանոց, ուր երգեցին, պարեցին եւ զուարճալի մթնոլորտ մը ստեղծելով ուրախացուցին ծերերը:

Բանակումին ընթացքին քոյրեր Դալար Յովսէփեան եւ Սերլի Պուրուհուսուզեան ստացան Փոխ Առաջնորդի աստիճան:

Բանակումին աւարտին, մասնակիցները իրարու հրաժեշտ տուին ցտեսութեան երգով եւ գոհունակ վերադարձան Դամասկոս՝ անհամբեր սպասելով յաջորդ տարուան բանակումին:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԻՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Մամուլի Յանձնախումբ ԴԱՄԱՍԿՈՍ

ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ եւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Գէորգ Գալէմքէրեանի ներկայութեամբ, Ուրբաթ, 15 Յուլիս 2016-ի երեկոյեան ժամը 9-ին, Դամասկոսի «Ա. Ահարոնեան» կեդրոնի «Տիգրան Ստեփանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սկստական խորհրդաժողով, մասնակցութեամբ՝ ՀՄԸՄ-ի Դամասկոսի մասնաճիւղի վարչութեան, մասնաճիւղի Սկստ. Խորհուրդին եւ խումբ մը

երէց ՀՄԸՄ-ականներու, որոնք ՀՄԸՄ-ի շարքերէն ներս եղած են Խմբապետ, Աքելլա, վարչական եւ Սկստ. Խորհուրդի անդամ: Խորհրդաժողովին ներկայ գտնուեցաւ նաեւ «Ա. Ահարոնեան» կեդրոնի ներկայացուցիչը:

Խորհրդաժողովին բացումը կատարեց մասնաճիւղի ատենապետ եղբ. Աւօ Աճէմեան: Այնուհետեւ, ան հրաւիրեց խորհրդաժողովը ղեկավարող եղբ. Գէորգ Գալէմքէրեանը փոխանցելու ժողովին նպատակը եւ ներկայացնելու մասնաճիւղի վարչութեան եւ Սկստ. Խորհուրդին կատարած աշխատանքները:

Մասնաճիւղի ատենապետուհի քոյր Սօսի Քիւրտեան մասնակից քոյր-եղբայրներուն փոխանցեց վարչութեան հնգամսեայ գործունէութեան ամփոփ տեղեկագիրը՝ մատնանշելով վարչութեան դիմադրած ղեկավարութիւնները, որոնք խորհրդաժողովի քննարկումի հիմնական կէտերը հանդիսացան:

Խանդավառ տրամադրու-

թեամբ, խորհրդաժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

... ԵՒ ՄԻՕՐԵԱՅ ԱՐՇԱԻԸ ԴԵՊԻ ՍԵՅՏՆԱՅԱ

Խորհրդաժողովէն շաբաթ մը առաջ, 1 Յուլիս 2016-ին, մասնաճիւղին ըՍկստ. Խորհուրդը կազմակերպեց միօրեայ արշաւ մը: 52 արի-արեւոյշներ, իրենց աստիճանաւորական կազմերով, ուղղուեցան Սեյտնայա: Արշաւին նպատակն էր սկստական շարքերը տանիլ բնութեան ծոցը եւ անոնց տալ ընդհանուր զարգացման եւ սկստական գիտելիքներ:

Արշաւողները Սեյտնայայի վանքը հասնելով աղօթեցին՝ Աստուծոյ խնդրելով Սուրիոյ խաղաղութիւն: Վանքի շրջափակին մէջ, եղբ. Բաֆֆի Պէքէրէճէան խումբին ներկայացուց սկստական դրօշակներու նշանակութիւնը:

Կէսօրին, արի-արեւոյշները ուղղուեցան ճաշարան, ուր սկստական ջերմ մթնոլորտի մէջ անցուցին հաճելի ժամեր:

Երեկոյեան, բոլորը Դամասկոս վերադարձան ազգային ոգեւորիչ երգերով խանդավառ մթնոլորտի մէջ:





ՖՈՒԹՊՈՒԼԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՄՐՑԱՇԱՐՔ՝ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

**Թղթակից
ԳԱՄԻՇԼԻ**

Հակառակ Սուրիոյ ապահովական դժուար կացութեան եւ երկրի անկայուն պայմաններուն, միութենական աշխատանքը կարելիութեան սահմաններուն մէջ կը շարունակուի Գամիշլիի մէջ:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղին նախաձեռնութեամբ եւ մարզական յանձնախումբին կազմակերպու-

թեամբ, անցնող ամառ, Ազգ. Եփրատ վարժարանի մանկապարտէզի դաշտին մէջ տեղի ունեցաւ ֆութպոլի երիտասարդական խումբերու մրցաշարք մը, նուիրուած՝ Սուրիոյ նահատակներու յիշատակին:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին չորս խումբեր՝ Հ.Մ.Ը.Մ. «Մասիս», Մար Ահօ, Մար Քրրիաքս եւ Մար Եաքուպ: Մրցումները պարզեցին հետեւեալ արդիւնքները.-
Մասիս-Մար Ահօ 5-3
Մասիս-Մար Քրրիաքս 4-4

Մասիս-Մար Եաքուպ 9-4
Աւարտական խաղը իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս» եւ Մար Քրրիաքս խումբերը եւ վերջ գտաւ 3-5 արդիւնքով՝ ի նպաստ Մար Քրրիաքսին:

Մրցաշարքին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղին վարչութիւնը, մարզական յանձնախումբը եւ մարզասէր համակիրներու կարեւոր թիւ մը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԵՍԱՊԻ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ ՍՐԱՀԱՅԻՆ ՔԵՐՄԷՍԸ

**Թղթակից
ՔԵՍԱՊ**

Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի մասնաճիւղին վարչութիւնը Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով սրահային եռօրեայ քերմէս մը կազմակերպեց հայաւանի «Սարդարապատ» սրահին մէջ: Քերմէսը ընդգրկեց հետաքրքրական խաղեր, նուէրներ եւ վաճառք:

Ճոխ մթնոլորտի մէջ քեսապցիներ անցուցին հաճելի ժամանակ: Քերմէսը արժանացաւ այցելուներու գնահատանքին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՄԻՇԼԻԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

**Մարի Մելքոն
ԳԱՄԻՇԼԻ**

Շաբաթ, 10 Սեպտեմբեր 2016-ին, Խաչվերացի տօնին առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի սկաուտները ուխտագնացութիւն մը կատարեցին Գամիշլիէն 14 քլմ. հարաւարեւմուտք գտնուող Տըմիսիա գիւղի Մար Ահօ եկեղեցին:

Ուխտագնացութեան մասնակցեցան 75 քոյր-եղբայրներ, որոնք Գամիշլիէն մեկնեցան կէսօրէ ետք ժամը 3.30-ին:

Կիսօրեայ գործունէութեան յայտագիրը ընդգրկեց եկեղեցւոյ քահանայ հօր դասախօսութիւն-զրոյցը՝ նիւթ ունենալով «Խաչը եւ իր նշանակութիւնը», ինչպէս նաեւ՝ երգի ուսուցում, մարզական խաղեր եւ նախընթրիք:

Երեկոյեան, ուխտագնացութեան մասնակցող խումբը բարձր տրամադրութեամբ վերադարձաւ Գամիշլի:

Նշենք, որ Գամիշլի-Տըմիսիա ճամբան կ'անցնի օդակայանէն եւ ամբողջութեամբ սուրիական բանակի հակակշիռին տակն է:



ՀԱԿԱՌԱԿ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԾԱՆՐԱԿՇԻՌ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ՝

«ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ 35-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՁ

Թղթակից
ՀԱԼԷՊ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.-Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան մամուլի յանձնախումբին, Հինգշաբթի, 24 Նոյեմբեր 2016-ին, «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ պաշտօնական հանդիսութեամբ մը նշուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.ի «Մարգիկ» պաշտօնաթերթին 35-ամեակը:

Հանդիսութիւնը բացուեցաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով, կատարողութեամբ Հ.Մ.-Ը.Մ.ի Հալէպի շեփորախումբի խումբ մը քոյր-եղբայրներու:

Օրուան հանդիսավարութիւնը կատարեց եւ բացման խօսքը ներկայացուց քոյր Նայիրի Ազարիկեան-Առոյեան: Ան մատնանշեց «Մարգիկ» պաշտօնաթերթին կարեւոր դերակատարութիւնը, իբրեւ Հ.Մ.-Ը.Մ.ի աշխարհասփիւռ մասնաճիւղերու միջեւ գաղափարական ու տեղեկատուական կամուրջ:

Այս առիթով, Հ.Մ.-Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի «Յովհաննէս Հինդլեան»

երէց-պարման միաւորէն քոյրեր Մարինա Մարգարեան եւ Հերա Խաչատուրեան արտասանեցին «Ոտքի՛, Հ.Մ.-Ը.Մ.ը կ'անցնի» գրութիւնը: Այնուհետեւ, ներկաներուն ներկայացուեցաւ «Մարգիկ» պաշտօնաթերթի ծնունդն ու 35-ամեայ պատմութիւնը ներկայացնող տեսերիզը:

Ապա, Բաֆֆի Պալեան դաշնամուրի վրայ մատուցեց Առնօ Պապաջանեանէն երկու ստեղծագործութիւն, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ վաստակաշատ Հ.Մ.-Ը.Մ.ական, «Մարգիկ» պաշտօնաթերթի երկարամեայ յօդուածագիր եղբ. Խաթակ Տիլպէրեան փոխանցելու օրուան խորհուրդը: Եղբ. Խաթակ Հ.Մ.-Ը.Մ.ի տարբեր ժամանակներու հրատարակութիւններուն անդրադառնալով հաստատեց, որ «Մարգիկ» միութենական նախորդ հրատարակութիւններու շարունակութիւնը կազմելով՝ հարազատ ժառանգորդը կը հանդիսանայ Հ.Մ.-Ը.Մ.ական պատմական մամուլին: «Մարգիկ»ի 35-ամեայ երթը ներկայացընելով ան ըսաւ. «35 տարիներու «Մար-

գիկ»ի գոյերթը, միութեան նպատակներուն ծառայելու գիտակցութիւնն էր որ ապրեցուց զինք: Եթէ չըլլար այդ գիտակցութիւնը Հ.Մ.-Ը.Մ.ական մարդուն մօտ՝ «Մարգիկ»ը շատոնց դադրած կ'ըլլար: Հետեւաբար, ան կենսական պահանջ է եւ մնայուն անհրաժեշտութիւն: Աւելին, իբրեւ հրատարակութիւն, հայ երկրի եւ արդի հայոց պատմութեան կարեւոր մէկ մասունքն է «Մարգիկ»ը, որովհետեւ ան կը ծառայէ հայակերտման եւ հայապահպանման այն նպատակին, որուն համար հիմնուած է Հ.Մ.-Ը.Մ.ը»:

Եղբ. Տիլպէրեան «Մարգիկ»ի 35 տարուան պատմութիւնը բնութագրելով նշեց, որ «Մարգիկ»ը միութենական, հասարակական, գաղափարական ուղ-





փակուեցաւ «Պահպանիչ»ով, որմէ ետք ներկաները շրջեցան սրահին մէջ ցուցադրուած սեղաններուն շուրջ եւ մօտէն ծանօթացան հոն ներկայացուած «Մարզիկ»ի բազմատասնեակ թիւերուն:



**«ՄԱՐԶԻԿ»Ի 35-ԱՄԵԱԿԸ
ՆԱԵՒ ԱՌՆՀԵՄԻ, ՎԱԼԱՆՍԻ
ԵՒ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԷՉ**



ղուծեամբ թերթ է եւ այդպիսով բոլոր նախադրեալներն ու պատճառները ունի հանդիսանալու հայ հանրային կարծիքի ձեւաւորման վրայ ազդեցութիւն ունեցող միջոց մը:

Օրուան խորհուրդի փոխանցումէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան ատենադպրուհի քոյր Գարօլին Քիւրքլեան-Առոյեան ընթերցեց «Մարզիկ»ի 35-ամեակին առիթով գանազան միութիւններու եւ հաստատութիւններու շնորհաւորագիրներն ու մաղթանքները:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Խմբապետ եղբ. Եղիա Քիւրքլեան մեներգեց Դաւիթ Բէկ օփերայէն «Գուսանի երգ»ը, դաշնամուրի ընկերակցութեամբ օրդ. Ռուզան Պարսումեանի:

Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան: Հ.Մ.Ը.Մ-ի 98-ամեայ պատմութեան անդրադառնալով՝ եղբ. Մանուկ յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութիւնը եղաւ հրաւէր մը, վերապրումի ուղեցոյց մը դէպի նոր խոյանքներ եւ նոր կերտումներ: Հայ երիտասարդութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի մէջ գտաւ բարձրանալու ու-

ղին, ուղիղ քալելու, անկարելի վերելքներ նուաճելու հոգեկան ուժը՝ բարձրանալու, բարձրացնելու, օգնելու, ծառայելու եւ զոհուելու: Իսկ Հալէպի Հ.Մ.Ը.Մ-ը Հալէպի հայապահպանման առաջին միջնաբերդը եղաւ, հայ դպրոցի եւ հայ եկեղեցւոյ կողքին եղաւ ազգային դարբնոց:

Հանդիսութեան վերջին բաժինով, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Վարչութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցաւ Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի ձեռամբ պատուոյ գիրով պարգեւատրելու «Մարզիկ» ամսաթերթի աշխատակիցներն ու յօդուածագիրները՝ եղբայրներ Րաֆֆի Սիւլահեանը, Խաժակ Տիւպէրեանը եւ Արմէն Քէօզկէրեանը: Պարգեւատրումէն ետք, Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան փոխանցեց իր սրտի խօսքը: Ան «Մարզիկ»ը նկատեց Հ.Մ.Ը.Մ-ի այն նուիրական դասագիրքը, որ մէկ կողմէ յուշարար է, իսկ միւս կողմէ կ'արձագանգէ այն բոլոր յաջողութիւններուն, որոնք պատիւ կը բերեն Հ.Մ.Ը.Մ-ին եւ ուժականութիւն կը ներշնչեն մեր ժողովուրդին:

Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի հոսկ բանքէն ետք, շեփորախումբին կատարողութեամբ հնչեց «Յառաջ նահատակ» քայլերգը: Հանդիսութիւնը



«Մարզիկ»ի 35-ամեակի տօնակատարութիւնները կը կատարուին գաղութ գաղութ՝ Յ.Ս.Ը.Մ.ական շրջանէ շրջան: Ուրախութիւն է տեղեկանալ, որ Հալէպի կողքին, 35-ամեակի հանդիսութիւններ եւ նշումներ կատարուած են նաեւ Հոլանտայի Առնհեմ քաղաքին, Վալանսի եւ Վիեննայի մէջ:

Յառաջիկային նշումներ կը կատարուին նաեւ այլ շրջաններու մէջ:



ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի ՍԿՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկաուտութեան խմբապետական կազմ ԳԱՅԻՐԷ



Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկաուտութեան խմբապետական կազմը մասնաճիւղին տարեկան բանակումը կազմակերպեց 10-13 Սեպտեմբեր 2016-ին, Գահիրէի մօտերը գտնուող Էլ-Օպուր քաղաքի արուարձաններէն մէկուն մէջ:

Բանակումին մասնակիցներու թիւն էր 38 գայլիկ-արծւիկ, արի-արենոյշ, խմբապետական կազմի 3 անդամներ եւ 3 օժանդակներ:

Ենօրեայ բանակումին յայտագիրը ընդգրկեց դրօշակի արարողութիւն, մարզանք, ձեռնային աշխատանք, սկաուտական եւ զանազան գիտելիքներու դասընթացք, մատակարարութիւն, բանակավայրի մաքրութիւն, խաղեր, պահակութիւն եւ բնականաբար... չարքաշուութիւն:

Ծնողներէ եւ մասնաճիւղի վարչութեան անդամներէ բաղկացած 35 հոգինոց խումբ մը Սեպտեմբեր 12-ին այցելեց բանակավայր՝ ներկայ գտնուելու փակման արարողութեան եւ խարուկահանդէսին, որմէ ետք ներկաները վայելցին ըսկաուտներու կողմէ պատրաստուած զանազան խաղեր:

Բանակումի աւարտին, բոլորը իրենց տունները վերադարձան գոհունակ տրամադրութիւններով, հրաժեշտ տալով ամրան եւ պատրաստուելով դպրոցական վերամուտին:

ԳԱՅԻՐԷ-ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկաուտութեան խմբապետական կազմ ԳԱՅԻՐԷ

17 Յունիս 2016-ին, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» ակումբի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Մայիսեան յաղթանակներու առիթով՝ 2 գայլիկներու եւ 3 արծուիկներու փոխանցման արարողութիւն:

Հինգ սկաուտներ միացան արիներու եւ արենոյշներու խումբերուն, ուր իրենց կը սպասէ տարբեր աշխարհ մը, հետաքրքրական գիտելիքներով, ինքզինք դաստիարակելու եւ

նուաճումներ արձանագրելու բազմաթիւ յայտագիրներով:



Տողանցքէն ետք, տեղի ունեցաւ արարողութիւնը, որուն յաջորդեց ընթերցում եւ պաստառի վրայ ներկայացում՝ Սարգարայատի, Ղարաքիլիսէի, Բաշ Ապարանի հերոսամարտերու եւ Հայաստանի Հանրապետութեան պետականութեան հաստատման, ինչպէս նաեւ՝ Շուշիի ազատագրման օրերէն դրուագներ, դէպքեր ու դէմքեր, պատրաստուած կազմին արենոյշներուն կողմէ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ՝ ՀԱՅՖԱՅԻ ԵՒ ԵԱՖԱՅԻ ՄԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Թղթակից ԵՐՈՒՍԱՂԵՄ

9-14 Օգոստոս 2016-ին, Պէյթ Ճալալի մէջ 45-րդ անգամ ըլլալով տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Երոսաղէմի մասնաճիւղին ընդհանուր բանակումը, մասնակցութեամբ՝ Երոսաղէմի, Հայֆայի եւ Եաֆայի մասնաճիւղերէն 56 գայլիկ-արծուիկներու եւ արի-արեւոյշներու:

Հնգօրեայ բանակումին մասնակիցները առիթը ունեցան հետեւելու սկաուտական, ազգային, պատմական եւ մշակութային բնոյթով դասախօսութիւններու եւ աշխատանոցներու: Յատուկ շեշտ դրուեցաւ հայերէն լեզուի ճիշդ գործածութեան վրայ:

Ձեռային աշխատանքներու կողքին, մասնակիցները երեք խումբի բաժնուած, իրարու դէմ մրցեցան դաշտային եւ խմբային տարբեր խաղերով: Խումբերը մասնակցեցան նաեւ ռալի արշաւի, որուն ընթացքին սկաուտները ցուցաբերեցին

անհատական եւ հաւաքական աշխատանքի բարձր տրամադրութիւն:

Բանակումին պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 13 Օգոստոս 2016-ին, ներկայութեամբ Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոս Յուլակ Մոմճեանի, Երոսաղէմի Հ.Յ.Դ. կոմիտէին, Հ.Մ.Ը.Մ.ի եւ ՀՕՄ-ի վարչութիւններուն, ինչպէս նաեւ՝ գաղութի այլ միութիւններու ներկայացուցիչներու:

Արարողութիւնը սկիզբ առաւ սկաուտական տողանցքով, որմէ ետք խօսքեր արտասանեցին Հ.Յ.Դ. կոմիտէի ներկայացուցիչ Սերոբ Սահակեան, Հ.Մ.Ը.Մ.ի Երոսաղէմի մասնաճիւղի ատենապետ քոյր Նոյեմի Նալպանտեան եւ մասնաճիւղի 45-րդ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Յարութ Պաղամեան:

Խօսքերուն յաջորդեց 13 նորընծաներու խոստման արարողութիւնը, որմէ ետք կատարուեցաւ դրօշակի արարողութիւն: Ապա, խարուկահանդէսով հանդիսութիւնն ու բանակումը հասան իրենց աւարտին:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ ԿԻՊՐՈՍ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

3. Գագանձեան ՆԻԿՈՍԻԱ

Սեպտեմբերին Կիպրոս այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆուտպոլի ակադեմիային մէկ պատուիրակութիւնը, նպատակ ունենալով մարզական բանակում մը կատարել Նիկոսիոյ մէջ: Պատուիրակութեան մաս կազմեցին 15 կրտսեր մարզիկներ, առաջնորդութեամբ՝ մարզիչ եղբ. Սեպուհ Պապիկեանի եւ ակադեմիայի ներկայացուցիչ եղբ. Տիգրան Թումասի:

Իրենց կոչումին գիտակից, Լիբանանի կրտսեր ֆուտպոլիստները, մարզական առաքելութեան կողքին, Կիպրոս այցելեցին զարգացնելու միջ-միութեանական իրենց յարաբերութիւնները, ամ-

րապնդելու հաւաքական աշխատանքի իրենց կամքը եւ միացեալ վարժութիւններու միջոցով թափ տալու առողջ մրցակցութեան իրենց ոգիին:

Լիբանանի կրտսեր ֆուտպոլիստները իրենց փորձերը կատարեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի մարզադաշտին վրայ, իրենց հմուտ խաղաոճով եւ կարգապահութեամբ տպաւորելով բոլորը:

Ֆուտպոլիստներուն մեծ գոհունակութիւն պարգեւեց Նիկոսիոյ GSP մարզադաշտ այցելութիւնը: Դաշտ մը, ուր



տեղի կ'ունենան «Չէմփիրնզ լիկ»-ի մրցումներ:

Այս առթիւ, մարզադաշտի պատասխանատուները Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլիստներուն փոխանցեցին մարզադաշտին պատմութիւնը, յատկապէս անդրադառնալով նոյն մարզադաշտին վրայ Կիպրոսի «Ափոէլ» խումբին ունեցած յաջողութիւններուն:

Ակադեմիայի ֆուտպոլիստները հետաքրքրութեամբ հետեւեցան իրենց կատարուած փոխանցումներուն եւ հարցումներու ճամբով ստացան յաւելեալ տեղեկութիւններ: Ապա, անոնք խաղացին ֆուտպոլի խաղ մը եւ հաճելի յիշատակներով բաժնուեցան այն դաշտէն, ուր իրենց հետքն ու դրոշմը ձգած են Մեսսիի եւ Ռոնալտոյի նման աստղեր:

Առ ի գնահատանք կրտսեր Հ.Մ.-

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԵՅՐՈՒԹԻ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԱՂԶԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ԳՐԱԻԷ ԼԻՔԱՆԱՆԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԻՐՔԸ

Լիբանանի փինկ-փոնկի աղջկանց Ա. դասակարգի խմբային ախոյեանութեան մրցումներուն, որոնք տեղի ունեցան Պէյրուսի արուարձաններէն Սոն Լա Սալի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի աղջիկները 3-0 արդիւնքով յաղթելէ ետք Ատապ Ուալ Ռիատա Քֆարչիմայի խումբին, ախոյեանութիւնը աւարտեցին երրորդ դիրքի վրայ:



Լ.Մ.ականներուն, մարզադաշտի պատասխանատուները անոնց նուիրեցին մէկական գլխարկներ:



Կիպրոս իրենց կեցութեան ընթացքին, ակադեմիայի ֆուլթպոլիստները մրցում մը կատարեցին Հ.Մ.Լ.Մ.ի Կիպրոսի ֆուլթպոլի խումբին հետ եւ 7-2 արդիւնքով յաղթեցին:

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ե.Մ. հիւրասիրութեամբ մը պատուեց Լիբանանի պատուիրակութիւնը: Հիւրասիրութիւնը տեղի ու-

նեցաւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ե.Մ.ի մարզադաշտին վրայ, ներկայութեամբ պետական երեսփոխան Վարդգէս Մահտեսեանի եւ Հ.Յ.Դ. Կիպրոսի կոմիտէի ներկայացուցիչին: Ներկայ գտնուեցան ակադեմիային ֆուլթպոլիստները եւ մեծ թիւով երիտասարդներ: Հիւրասիրութեան ընթացքին խօսքեր արտասանեցին Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ե.Մ.ի ատենապետ եղբ. Յակոբ Գազանճեան եւ Լիբանանի ֆուլթպոլի ակադեմիայի ներկայացուցիչ եղբ. Տիգ-

րան Թոմաս: Տեղի ունեցաւ յուշանրէրներու փոխանակում, որմէ ետք ներկաները շնորհաւորական մաղթանքներ ուղղեցին եղբ. Թոմասին՝ ակադեմիային կատարած երախտաշատ աշխատանքին համար:

Հանդիպումը աւարտեցաւ խրախճանքով:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

StudioVICKEN 2005 PAKS



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ 7-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԱՒԱՐՏԵՑԱԲ ԳԵՂԵՑԻԿ ՅՈՒՇԵՐՈՎ

Մարո Բէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու սկաուտական 7-րդ ընդհանուր բանակումը իր աւարտին հասաւ Ուրբաթ, 6 Օգոստոս 2016-ի երեկոյեան, փակման յատուկ արարողութեամբ եւ անոր յաջորդած հրաժեշտի խարուկահանդէսով:

435 արի-արենոյշներ, գայլիկ-արծիկներ եւ սկաուտ դեկավարներ ամբողջ շաբաթ մը յիշատակելի օրեր ապրեցան բնութեան ծոցին մէջ, իրենց տան՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Թեքսաս բանակավայրին մէջ: Այո՛, շրջանի զանազան մասնաճիւղերէն եկած ու բանակավայր համախմբուած քոյր-եղբայրները ամբողջ եօթը օրեր բնութեան գեղեցկութիւնը ապրեցան, իրարու աւելի մտերմացան, նորանոր գիտելիքներ ամբարեցին եւ անմոռանալի յուշեր արձանագրեցին իրենց յիշողութեան մէջ:

Պէտք է ընդգծել, որ եօթնօրեայ ընդհանուր այս բանակումը մեծ եռանդ ու ոգեւորութիւն ստեղծեց շրջանի մասնաճիւղերուն միջեւ, որոնք անկասկած իրենց համագործակցութիւնը պիտի շարունակեն սկաուտական իրենց գործունէութեանց ընթացքին:

Երեքշաբթի, 2 Օգոստոսի երեկոյ-

եան, ուրախանալի էր ականատեսը ըլլալ Հիւսիսային Քալիֆորնիոյ մասնաճիւղերէն 12 քոյր-եղբայրներու, որոնք համապատասխան դասընթացքներու հետեւած եւ յաջողած ըլլալով՝ բազմահարիւր բանակողներու դիմաց ստացան «Դէպի ազատութիւն» սկաուտական ազգային իրենց շքանշանները:



Աւելի հետաքրքրական էր Չորեքշաբթի, 3 Օգոստոսի երեկոյեան խարուկահանդէսը, որուն սկիզբը, ամերիկեան սկաուտութեան երկու ներկայացուցիչներ, յատուկ արարողութեամբ մը Woodbadge-ի կարգը յանձնեցին քոյրեր Շարլին Կիւզէլեանին, Ճոզլին Ապաճեանին եւ եղբ. Նարեկ Թիւֆէնքճեանին, զանոնք յայտարարելով միջազգային սկաուտներ:

Նոյն օրը, ցերեկը, բանակողներուն միացան շուրջ 100 գայլիկ-արծուիկներ, որոնք իրենց ամէնօրեայ աշխատանքներուն առընթեր, հետեւեցան «Ս. Վարդան» եւ «Գայլ Վահան» կրօնական շքանշաններու դասընթացներուն:

Կիրակի, 31 Յուլիս 2016-ին սկիզբ առած եւ Շաբաթ, 6 Օգոստոսին աւարտած շրջանի սկաուտական մեծագոյն այս համախմբումին փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 5 Օգոստոսի երեկոյեան ժամը 6.30-ին, ձեռնալին աշխատանքներով յարգարուած բանակավայրի հաւաքատեղիին մէջ, ուր ուրախ կանչերով, երգերով ու մանաւանդ կարգապահութեամբ իրենց դիրքերը գրաւեցին մեծ ու փոքր բանակողները: Յիշատակելի այս պահը ապրելու եւ բանակողներու ուրախութեան մասնակից դառնալու համար, բանակավայր փութացած էին Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանն ու Շրջանային Վարչութեան կազմը, ինչպէս նաեւ՝ մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ եւ Հ.Մ.Ը.Մ-ական հիւրեր:



Բանակումի ընդհանուր պատասխանատու քոյր Շարլին Կիւզէլեանի հրահանգով, քար լուծիւն տիրեց բանակավայրէն ներս: Ան բացուած յայտարարելով փակման հանդիսութիւնը՝ անդրադարձաւ բանակումի աշխատանքներուն եւ ընդգծեց ներկայացուած նիւթերուն՝ հայ մշակոյթին, պատմութեան, Հայ Դատին, սկաուտական գիտելիքներուն եւ մանաւանդ ընկերասիրութեան կարեւորութիւնը: Ան թելադրեց բանակողներուն իրագործել զանոնք իրենց ղեկավարած սկաուտական աշխատանքներուն ընթացքին: Ապա, քոյրը շնորհակալութիւն յայտնեց

Շրջանային Վարչութեան՝ բանակումի յաջողութեան նպաստած ըլլալուն համար, նաեւ Վազգէն Քհնյ. Աթմաճեանին՝ Հ.Մ.Ը.Մ-ի գայլիկ-արծուիկներու կրօնական շքանշանի դասընթացը գլխաւորած եւ բանակումի խմբապետական կազմին՝ բանակումի աշխատանքները լաւապէս ղեկավարած ըլլալուն համար:

Այնուհետեւ տեղի ունեցաւ գայլիկ-արծուիկներու «Ս. Վարդան» եւ «Գայլ Վահան» կրօնական շքանշաններու յանձնումի արարողութիւնը: Առաջին անգամ շնորհուող այս շքանշանին արժանացան 96 գայլիկ-արծուիկներ, որոնք բանակումին ընթացքին վեց դասախօսութիւններու հետեւեցան, իսկ բանակումէն առաջ՝ Ս. Պատարագի: Կրօնական շքանշաններու կարեւորութիւնը բացատրեցին Վազգէն Քհնյ. Աթմաճեանն ու Նարեկ Ա. Քհնյ. Փեհլիվանեանը: Ապա, շքանշանները յանձնեցին բանակումի պատասխանատու քոյր Շարլին Կիւզէլեանն ու փոխ պատասխանատու քոյր Դալար Գալստեանը:

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց եղբ. Արտո Ղազարեան, որ հաստատելով բանակումին յաջողութիւնը՝ շնորհաւորեց բանակողներն ու բանակումին պատասխանատու մարմինը, որոնք իրենց մասնակցութեամբ ոչ միայն նպաստեցին անոր յաջողութեան,





այլե՛ն նորանոր փորձառութիւններ շահեցան: Եղբայրը յատկապէս շեշտեց Հ.Մ.Ը.Մ-ի կարեւորութիւնը, որ հայ երիտասարդին ու պատանիին համար ազգային դաստիարակութեան եւ կեանքի դժուարութիւններու յաղթահարման կարելիութիւններ կը ստեղծէ: Ապա, առ ի երախտագիտութիւն, Ղազարեան բանակումին խորհրդանիշը կրող դրօշ մը յանձնեց բանակումի ընդհանուր պատասխանատու քոյր Շարլին կիւզէլեանին, որ բանակումի ամբողջ տեւողութեան արթուն պահակի նման հետեւեցաւ անոր ընթացքին: Նոյն դրօշներուն արժանացան նաեւ բանակումին ամբողջ ընթացքին իրենց վրանները մաքուր պահած գայլիկ-արծուիկ եւ արիարենոյ խմբակները:

Տպաւորիչ փակման արարողութեան

յաջորդեց բանակումին հրաժեշտի խորուկահանդէսը, որ պատրաստուած էր Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի եւ Պըրպէնքի «Սիփան» մասնաճիւղի բանակողներուն կողմէ: Խարոյկի բարձրացող կրակին շուրջ համախմբուած բանակողներուն հրամցուեցան գեղեցիկ զաւեշտներ, երգեր, պարեր, կանչեր, բանակումին ընթացքին պատահած զուարճալի դէպքեր, որոնց մասնակից դառնալով նաեւ բանակողները՝ մեծ ոգեւորութիւն ստեղծեցին խարոյկին շուրջ:

Գեղեցիկ անակնկալով մը բանակավայր այցելած էր նաեւ ազգային-յեղափոխական երգերու անզուգական երգիչ Գառնիկ Սարգիսեան, որ իր հրամցուած փունջ մը երգերով մեծապէս խանդավառեց ներկաները՝ ազգային ոգիով աւելի եւս հայկականացնելով բնութեան գեղեցիկ այդ անկիւնը, որ եօթը օրերէ ի վեր փոքրիկ Հայաստանի մը վերածուած էր:

Յուզիչ էր խարուկահանդէսի աւարտին խմբերգուած հրաժեշտի երգը: Բոլոր բանակողները ձեռք-ձեռքի օղակաւ՝ յուզումով երգեցին զայն, ողջագուրուեցան, նոյնիսկ արցունք թափեցին, ի տես բանակումի աւարտին, որ այնքան գեղեցիկ յուշեր արձանագրած էր իրենց յիշողութեանց մէջ:

Շաբաթ, 6 Օգոստոսի առաւօտեան, դժկամութեամբ արթնցան բանակողները: Անոնք չէին ուզեր հրաժեշտ տալ իրենց այնքան սիրած բանակումին: Սակայն ելք չունէին... Քանի մը ժամաւան ընթացքին բնութեան այդ գեղեցիկ անկիւնը մաքրուեցաւ ու ամայացաւ:

«Յտեսութիւն մըն է եղբայրք, միա՛յն ցտեսութիւն»:



ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 41-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԿԱՄԱԲՈՐՆԵՐՈՒՄԻ Ի ՊԱՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

ՀՄԼՄ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնները տարիներէ ի վեր գեղեցիկ սովորութիւն դարձուցած են Նաւասարդեան մարզախաղերու հանդիսութիւններէն ետք հրաւիրելու Նաւասարդեանի եւ Շրջանայինի բոլոր յանձնախումբերը, որպէսզի իրենց երախտագիտութիւնը յայտնեն անոնց, որոնք ամբողջ տարին նուիրեալ գործունէութեամբ օգտակար կը հանդիսանան շրջանի ՀՄԼՄ-ի աշխատանքներուն ընդհանրապէս եւ Նաւասարդեան մարզախաղերուն յատկապէս:

Ամբողջ տարուան ընթացքին հարիւրաւոր կամաւոր ՀՄԼՄ-ականներ եւ համակիրներ, անսահման գոհողութիւններով եւ հաւատքով, օգտակար կը հանդիսանան ՀՄԼՄ-ին եւ անոր հոգածութեան յանձնուած սերունդներուն: Այդ օգտակարութեան լաւագոյն օրինակը Նաւասարդեան մարզախաղերն ու անոնց արձանագրած յաջողութիւններն են, հազարաւոր երիտասարդներու մասնակցութեամբ:

Այս տարի ՀՄԼՄ-ական այս յատուկ հանդիպումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 12 Օգոստոս 2016-ի երեկոյեան, Փասատինայի Հայ Կեդրոնին մէջ, աւելի քան երկու հարիւր նուիրեալ ՀՄԼՄ-ականներու ներկայութեամբ:

Հանդիպումին հանդիսավարութիւնը կատարեց Շրջանային Վարչութեան անդամ քոյր Մարո Քէշիշեան, որ ներկաներուն բարի գալուստի խօսքեր փոխանցելէ ետք, գնահատեց անոնց գոհողութեան անսակարկ ոգին եւ վստահեցուց, որ ՀՄԼՄ-ը իր անձնագոհ անդամներուն շնորհիւ միայն կրնայ իր ծրագիրները իրականացնել եւ Նաւասարդեանի նման հրապարակային լայնածաւալ աշխատանքներ յաջողութեամբ կազմակերպել՝ ի սէր մեր երիտասարդութեան համախմբման եւ ի սէր իրեն զօրակցող հայ համայնքին:

«ՀՄԼՄ-ը հաւատքի, սիրոյ եւ միասնականութեան ոգին սերմանող կազմակերպութիւն է: ՀՄԼՄ-ը դո՛ւք էք, սիրելի ներկաներ, որ ձեր հաւատքով, սիրով եւ միասնականութեամբ յաջողութիւն եւ փայլք կու տաք մեր սիրելի կազմակերպութեան նպատակներուն իրականացման», ըսաւ քոյր Քէշիշեան եւ Շրջանային Վարչութեան անունով



երախտագիտութիւն յայտնեց բոլորին՝ իրենց նուիրումին համար եւ ապա բեմը փոխանցեց Նաւասարդեան 41-րդ մարզախաղերու ընդհանուր ծրագրաւորման պատասխանատու, Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Սազօ Կարապետեանին:

Եղբ. Կարապետեան, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն՝ իրենց կամաւոր աշխատանքներուն համար, որոնց շնորհիւ ՀՄԼՄ-ի եւ յատկապէս Նաւասարդեան մարզախաղերու առիթով կազմակերպուած ձեռնարկները յաջողութեամբ կ'իրագործուին: Եղբայրը մէկ առ մէկ յիշատակեց Նաւասարդեանի ենթայանձնախումբերը եւ անոնց կատարած աշխատանքը: Կարապետեանի խօսքերէն ետք, ցուցադրուեցաւ Նաւասարդեան մրցումներուն եւ ընդհանրապէս ՀՄԼՄ-ի աշխատանքներուն վերաբերող գեղեցիկ տեսերիզ մը, որ մեծ ոգեւորութիւն ստեղծեց ներկաներուն մօտ:

Այնուհետեւ ներկայացուեցաւ գեղեցիկ անակնկալ մը: Շրջանային Վարչութիւնը, գնահատելով ներկաները, իւրաքանչիւրին նուիրեց ՀՄԼՄ-ի Շուշանածաղիկով ու վահանով ձեռագործը





լած շալ մը, որ մեծապէս տպաւորեց ներկաները: Այսպէս, հերթաբար բեմ հրաւիրուեցան Շրջանային Մարզական եւ Սկաուտական Խորհուրդներու, դաստիարակչական, շեփորախումբի, բանակավայրի, Նաւասարդեան գլխաւոր յանձնախումբի, ինչպէս նաեւ՝ Նաւասարդեանի ֆուլթպոլի, փակման հանդիսութեան, փառատօնի, փառատօնի գեղարուեստական եւ փոքրերու արւեստի, մուտքի ենթայանձնախումբերու անդամները, փառատօնի մասնակից երգիչներն ու այլ կամաւորներ, որոնց իւրաքանչիւրին կուրծքերը Շրջանային Վարչութեան ձեռամբ գարդարուեցան ոսկեգոյնով պատրաստուած Հ.Մ.Ը.Մ.ի գեղեցիկ շալերով:

Հանդիպումին ուրախ միջնորդութէն խանդավառուած՝ կարգ մը մասնակիցներ իրենց սրտի խօսքերը փոխանցեցին, շնորհակտրելով Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը:

Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, որ ներկաները ողջունելով, շնորհակտրեց զանոնք Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն յաջողութեան իրենց բաժինը բերած ըլլալուն համար: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի նուիրատուներուն, հովանաւորներուն, պատուոյ նախագահներուն, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներուն եւ մասնաճիւղերու վարչութիւններուն, որոնք, ի գին մեծ զոհողութիւններու, օգտակար կը հանդիսանան Հ.Մ.Ը.Մ.ին, որպէսզի ան ազգանպաստ իր գործունէութիւնը շարունակէ շրջանէն ներս:

Հանդիպումին վերջին բաժինով, ներկաները ուրախ տրամադրութեամբ պարեցին հրամցուած խանդավառ երաժշտութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ «ԿԱՄԱՒՈՐ»Ը

Արդէն իսկ շրջանառութեան մէջ է Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային սկաուտութեան էլեկտրոնային պաշտօնաթերթի՝ «Կամաւոր»ի առաջին թիւը, երկլեզու (հայերէն, սպաներէն), 9 էջով:

«Ինչո՞ւ կամաւոր» խորագրեալ խմբագրականին մէջ կը կարդանք, որ պաշտօնաթերթը լոյս կը տեսնէ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի մասնաճիւղերու խմբապետներու ընդհանուր ժողովին որոշումով (Փետրուար 2016), Հարաւային Ամերիկայի շրջանի ըսկաուտութեան ձայնը տարածելու նպատակով: Այսպէս, կ'ակնկալուի շրջանային եւ մասնաճիւղային մակարդակի կատարուող սկաուտական աշխատանքներու մասին լուրեր փոխանցել եւ ժողովուրդին ծանօթացնել:

«Կամաւոր» անունի ընտրութեան անդրադառնալով, խմբագրականը կը նշէ, որ կամաւոր աշխատանքը Հ.Մ.Ը.Մ.ական շարժումին հիմնական յատկանիշն է, որմով կը ծառայենք միութեան նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին, կազմելով «Կամաւոր բանակ»:


«Այս նոյն բանակն է, որ կ'աշխատի հայ ժողովուրդին համար, կը պայքարի այլասերման ու ապագայնացման դէմ, կը պահպանէ հայ լեզուն եւ մշակոյթը, կերտելով հարազատ ու անկեղծ ազգային նկարագիր», կը շեշտէ խմբագրականը:

«Կամաւոր»ի առաջին թիւով ներկայացուած են՝

- Հարաւային Ամերիկայի մասնաճիւղերու խմբապետական երկրորդ ժողովը:
- Հարաւային Ամերիկայի շրջանային խմբապետական սեմինարը:
- Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեվիտոյի «Կամք» սկաուտական միութեան, Գորտոպայի «Արագած» եւ Պուէնոս Այրէսի «Արարատ» սկաուտական խումբերուն նոր տարեշրջանի գործունէութեան բացման հանդիսութիւնները:
- «Արարատ» սկաուտական խումբի 60-ամեակի հանդիսութիւնը:

«Կամաւոր»ի մէջ տեղ գտած է նաեւ Արժանթինի ազգային սկաուտութեան խմբապետ Խերարտօ Մ. Մադէի «Ապրիլ» խորագրեալ ուղերձը՝ Եղեռնի 101-ամեակին առիթով, ուղղուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն:

Նշենք, որ «Կամաւոր»ի իւրաքանչիւր նիւթ տրուած է հայերէն եւ սպաներէն, կողք-կողքի, նոյն էջով եւ համապատասխան նկարով:





ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՍՓԻՒԹՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ ՀԵՏ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 7-րդ համագումարին առիթով Հայաստան այցելող Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղին սկսողական պատուիրակութիւնը Հինգշաբթի, 21 Յուլիսին, տեսակցութիւն մը ունեցաւ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի հետ: Պատուիրակութեան մաս կազմեցին քոյրեր Անիթա Կորկիսեան (մասնաճիւղի խմբապետուհի) եւ Փաթիլ Տատուրեան (մասնաճիւղի փոխ խմբապետուհի եւ շրջանի կիրակնօրեայ վարժարանի ուսուցչուհի):

Պատուիրակութիւնը ընդունելով, նախարար Յակոբեան բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղին եւ կիրակնօրեայ վարժարանին հայապահպանման աշխատանքները նոր սերունդին մօտ: Նախարարը մօտէն հետաքրքրուեցաւ

մասնաճիւղին եւ կիրակնօրեայ վարժարանին ներկայ իրավիճակով, Սփիւռք-Հայաստան նախաձեռնութիւններու մասնակցութեամբ եւ ապագայի ծրագիրներով:

Տեսակցութեան աւարտին, նախարար Յակոբեան նորանոր յաջողութիւններ մաղթեց պատուիրակութեան անդամներուն, որոնք իրենց կարգին յատուկ յուշանուէրներով պատուեցին զայն:

Տեսակցութեան ներկայ գտնուեցաւ նախարարութեան «Հայերն այսօր» ելեկտրոնային թերթին ներկայացուցիչը, որ այս առիթով հարցազրոյց մըն ալ կատարեց Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերուն հետ:



ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ...

Շարունակուած էջ 7-էն

ՀԱՒԱՏՔԻ ՄԱՐԴԸ...

Շարունակուած էջ 9-էն

Եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահով Հ.Մ.Ը.Մ.ը կը կորսնցնէ բազմափաստակ Հ.Մ.Ը.Մ.ական մը, որուն բովանդակ կեանքը հայ մարմնակրթական շարժումին ճամբով բոլորանուէր ծառայութիւն մը եղաւ հայութեան եւ Հայաստանին:



Եղբ. Թորիկեանի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 13 Դեկտեմբերին, Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Տաճարին մէջ, որմէ ետք թաղման կարգը կատարուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ, ուր յանուն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին՝ դամբանական խօսք արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան (խօսքին անբողջութիւնը տեսնել էջ 8-9):

33 տարի առաջ, ան կը գրէր իր նշանաւոր մէկ յօդուածը՝ «Ո՞վ պիտի գրէ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը» վերնագիրով: Այսօր, 33 տարի ետք, հարցումը կը վերադարձնենք մեր վաստակաշատ եղբոր, ըսելով թէ՛ քեզմէ ետք ո՞վ պիտի գրէ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը, սիրելի՛ եղբայր Բիւզանդ:

Յարգելի՛ սգակիրներ, Հասած է հրաժեշտի դժուար պահը, ուր մեր վերջին յարգանքը ընծայելէ ետք՝ վարձքդ կատար պիտի ըսենք եղբոր մը, որուն բովանդակ կեանքը եղաւ անսակարկ ծառայութիւն, նուիրում եւ գոհաբերութիւն Հ.Մ.Ը.Մ.ին եւ այն բոլոր արժէքներուն, զորս Հ.Մ.Ը.Մ.ը կը դաւանի:

Մենք հրաժեշտ կու տանք եղբայր Բիւզանդին, սակայն ան հրաժեշտ չի տար մեզի: Իր յիշատակներով, պատգամներով եւ կենդանի օրինակով ան կը մնայ մեզի հետ, մեր մէջ, իբրեւ ուղեցոյց եւ առաջնորդ Հ.Մ.Ը.Մ.ական իրաւ գործի, Հ.Մ.Ը.Մ.ական տիպա՛ր մարդու:

Այս տխուր առիթով, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, կու գանք խոնարհելու եղբայր Բիւզանդի անթաւամ յիշատակին դիմաց եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին անունով մեր ցաւակցութիւնները կը յայտնենք եղբոր ընտանեկան պարագաներուն, հարազատներուն եւ տասնամեակներու ընթացքին անոր գործակից եղբայրներուն եւ քոյրերուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը խոր կսկիծով կը սգայ իր մեծ կորուստը եւ աշխարհասփիւռ իր 107 մասնաճիւղերուն համար կը յայտարարէ եօթնօրեայ սուգ:

Երթդ բարի՛, եղբայր Բիւզանդ: Հ.Մ.Ը.Մ.ը միշտ պիտի յիշէ քեզ:

ՍՈՏՈՒՔՈՒ

	2		7		3		6	
		6		8		3		
	4		6		1		8	
7		4				6		1
	9						7	
6		2				4		8
	8		1		6		2	
		5		2		7		
	7		3		4		1	

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօսուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

8	5	7	3	6	2	1	4	9
4	6	1	7	5	9	3	2	8
9	3	2	8	1	4	5	6	7
1	2	3	9	8	6	4	7	5
5	4	6	2	7	3	9	8	1
7	8	9	1	4	5	6	3	2
3	9	5	6	2	7	8	1	4
2	1	4	5	3	8	7	9	6
6	7	8	4	9	1	2	5	3

Պատասխանը՝ յաջորդիւ


ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Այրող, սաստիկ տաք - Լրիկ:
- Գեղամ Սարեանի երկերէն - Յակոբ Պարոնեանի ծննդավայրը:
- Կամար - Լիբանանի գետերէն:
- Նոյն գիրերը - Հաստատական պատասխան:
- Հարցական դերանուն - Խաչատուր Մալումեանի ծածկանունը:
- Մեծ մայր - Արական օտար անուն - Սերունդ:
- Կրկնուած բաղաձայններ - Կանացի վզնոց - Յափշտակէ՛ - Համեմային եւ բուժական բոյս:
- Սեպ - Սուտանի լիճերէն - Կիլիկեան քաղաք:
- Իշխանութիւն - Գրաբար՝ հասկցի՛ր:
- Լծորդութիւն - Տարի - Արական օտար անուն:
- Իգական օտար անուն - Յանկութիւն:
- Ցուցական ածական - Մերձաւոր Արեւելքի պատմական երկիրներէն - Թրջել, ցօղել:
- Սուրբ գրային մարգարէ - Գինիի ոգի - Կարիճ - Ցուցական ածական:
- Ոտք - Որովհետեւ - Վահանի փոր:
- Նախագուռ - Կրկնուած բաղաձայններ - Տտուն:
- Իշխանաւոր - Այբուբենէն - Աւետիք Իսահակեանի «Ծաղիկները»:
- Երեքով բազմապատկուած - Ծուռ ակռայ:
- 420 - Ձայնակից գիրեր - Ֆրանսական գետ:
- Մեծագործութիւն (հակ.) - Մարտքեան քաղաք:
- Հուր - Դիտել կամ վերաբերիլ - 67:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Ճատրակի հայրենի կրանտմասթրը:
- Քներգ - Ամսանուն մը - Չքաւոր:
- Յակոբ Պարոնեանի հրատարակած երգիծաթերթերէն - Առարկայ - Այբուբենէն:
- 1001 եկեղեցիներու քաղաքը - Պիելոուս թենիսվումըն:
- Արական օտար անուն - Իրերայաջորդ տառեր - Ստացական ածական - Ժլատ:
- Կանացի զարդ - Նախանձախնդի՛ր - Տարածքի միաւոր:
- Դրկից տառեր - Իտալական գետ «Ֆորմիլա 1»-ի աւստրալացի մրցավարող:
- Նոյի կառուցած նաւը - Կրկնուած ձայնաւորներ - Կրկնուած բաղաձայններ:
- Կենդանական սննդանիւթ - Հայկական ըմբշամարտ - Քայլաչափ:
- Չօրանալ, քաջալերուիլ - Բռնատեղ - Սերմնափակ:
- Իրերայաջորդ գիրեր - Գրաբար՝ ո՞ւր - Արական օտար անուն - Պապկայ - Արական օտար անուն:
- Նոյնիսկ եթէ - Ժամանակի միաւոր - Թուչուններու խումբ - Վրան երկաթ ծեծելու պողպատեայ կազմած:
- Եղջերաւոր կենդանիներու հովիւ - Մտացի, ուշիմ:
- Իգական օտար անուն - Ասիական երկիր - Արական անուն:
- «ԵՈՒ.Է.ԷՖ.Ա.»ի նախկին նախագահը - Այբուբենէն:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԹԻՒ 223 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒՐԻՄ

